

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի
ԹԻՎ 813/2013 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)**

«Սենքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների

էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին»

Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Էներգասպառող արտադրանքին ներկայացվող էկոնախագծման պահանջներ սահմանելու շրջանակ սահմանելու մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի 2009/125/ԵՀ հրահանգը¹ եւ մասնավորապես՝ դրա 15(1) հոդվածը,

էկոնախագծման հարցերով խորհրդատվական ֆորումում քննարկումներ անցկացնելուց հետո,

քանի որ՝

- 1) համաձայն 2009/125/ԵՀ հրահանգի՝ էկոնախագծմանը ներկայացվող պահանջները պետք է սահմանվեն Հանձնաժողովի կողմից էներգասպառող այն արտադրանքի համար, որն ունի վաճառքի եւ շրջանառության էական ծավալներ, նշանակալից ազդեցություն է գործում շրջակա միջավայրի վրա եւ ունի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու զգալի ներուժ՝ չպահանջելով չափազանց մեծ ծախսեր.
- 2) կաթսաների արդյունավետության վերաբերյալ դրույթները սահմանվել են «Հեղուկ կամ գազային վառելիքով աշխատող նոր տեսակի ջրատաքացուցիչ

¹ՊՏ L 285, 31.10. 2009թ., էջ 10:

կաթսաներին ներկայացվող արդյունավետության պահանջների մասին» Խորհրդի 1992 թվականի մայիսի 21-ի 92/42/ԵՏՀ հրահանգով².

- 3) 2009/125/ԵՀ հրահանգի 16(2)(ա) հոդվածով նախատեսվում է, որ 19(3) հոդվածում նշված ընթացակարգի եւ 15(2) հոդվածով սահմանված չափանիշների համաձայն, ինչպես նաեւ Էկոնախագծման հարցերով խորհրդատվական ֆորումում քննարկումներ անցկացնելուց հետո Հանձնաժողովը անհրաժեշտության դեպքում պետք է կիրարկումն ապահովող միջոցառումներ ներկայացնի ջերմոցային գազերի արտանետումների ծախսարդյունավետ կրճատման մեծ ներուժ ունեցող այնպիսի արտադրանքի համար, ինչպիսիք են ջեռուցման եւ ջրային ջեռուցման սարքավորումները.
- 4) Հանձնաժողովն իրականացրել է Միությունում սովորաբար օգտագործվող սենքի տաքացուցիչների եւ համակցված (սենքի եւ ջրի) տաքացուցիչների տեխնիկական, բնապահպանական եւ տնտեսական հայեցակետերի վերաբերյալ նախապատրաստական ուսումնասիրություն: Ուսումնասիրությունը մշակվել է Միության եւ երրորդ երկրների շահառուների ու շահագրգիռ կողմերի հետ համատեղ, իսկ արդյունքները հասանելի են դարձել հանրության համար.
- 5) սույն կանոնակարգի նպատակներով էներգիայի սպառումը դրա օգտագործման փուլում ու (ջերմային պոմպով տաքացուցիչների դեպքում) ձայնային հզորության մակարդակները սահմանվել են որպես տարածքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների մասով բնապահպանական էական հարցադրում: Բացի այդ, հանաժո վառելիքով աշխատող տաքացուցիչների դեպքում ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, պինդ մասնիկների եւ ածխաջրածնի արտանետումները սահմանվում են որպես բնապահպանական էական հարցադրում.

² ՊՏ L 167, 22.6.1992թ., էջ 17:

- 6) նպատակահարմար չէ ածխածնի մոնօքսիդի, պինդ մասնիկների եւ ածխաջրածնի արտանետումների նկատմամբ էկոնախագծման պահանջներ սահմանել, քանի որ ներկայումս դեռեւս առկա չեն չափման համապատասխան եվրոպական մեթոդներ: Չափման այդպիսի մեթոդներ մշակելու նպատակով Հանձնաժողովը ստանդարտացման եվրոպական կազմակերպություններին լիազորել է սույն կանոնակարգի վերանայման ընթացքում դիտարկել այդ արտանետումների նկատմամբ էկոնախագծման պահանջների սահմանման հնարավորությունը: Սենքի տաքացուցիչներից եւ համակցված տաքացուցիչներից արտանետվող ածխածնի մոնօքսիդի, պինդ մասնիկների եւ ածխաջրածնի արտանետումներին ներկայացվող էկոնախագծման պահանջների վերաբերյալ ազգային դրույթները կարող են գործել կամ ներկայացվել մինչեւ Միության էկոնախագծման պահանջներն ուժի մեջ մտնելը: «Գազային վառելիքով աշխատող սարքերի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 30-ի 2009/142/ԵՀ հրահանգի դրույթները³, որոնցով առողջության եւ անվտանգության նկատառումներով սահմանափակվում է գազային վառելիքով աշխատող սարքերի այրման արգասիքները, անփոփոխ են մնում.
- 7) նախապատրաստական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2009/125/ԵՀ հրահանգի I հավելվածի 1-ին մասում նշված՝ էկոնախագծման այլ պարամետրերի մասով պահանջները սենքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների դեպքում անհրաժեշտ չեն: Մասնավորապես, ներկայիս եվրոպական շենքային ֆոնդը ջեռուցելու նպատակով ջերմային պոմպով տաքացուցիչներում օգտագործվող սառնազդակների հետ կապված ջերմոցային գազերի արտանետումներն էական չեն համարվում: Ջերմոցային գազերի այդ արտանետումների նկատմամբ էկոնախագծման պահանջներ սահմանելու նպատակահարմարությունը կվերազնահատվի սույն կանոնակարգը վերանայելու ընթացքում.

³ ՊՏ L 330, 16.12.2009թ., էջ 10:

- 8) սույն կանոնակարգի գործողության ոլորտը պետք է ներառի կաթսայով սենքի տաքացուցիչները, համակցված արտադրության սենքի տաքացուցիչները եւ ջերմային պոմպով սենքի տաքացուցիչները, որոնք սենքի ջեռուցման նպատակներով ջերմային էներգիա են հաղորդում ջրային ջեռուցման կենտրոնական համակարգերին, ինչպես նաեւ կաթսայով համակցված տաքացուցիչները եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչները, որոնք սենքի ջեռուցման նպատակներով ջերմային էներգիա են հաղորդում ջրային ջեռուցման կենտրոնական համակարգերին, ինչպես նաեւ ջերմային էներգիա՝ խմելու եւ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող տաք ջրի մատակարարման համար: Այդ տաքացուցիչները նախատեսված են այդ թվում կենսազանգվածից (եթե ոչ հիմնականում), էլեկտրաէներգիայից եւ շրջակա միջավայրից կամ արտանետվող ջերմությունից ստացվող գազային կամ հեղուկ վառելիքով աշխատելու համար.
- 9) այն տաքացուցիչները, որոնք նախատեսված են հիմնականում (ավելի քանի 50 տոկոսով) կենսազանգվածից ստացվող գազային կամ հեղուկ վառելիքով աշխատելու համար, ունեն որոշակի տեխնիկական առանձնահատկություններ, որոնք պահանջում են տեխնիկական, տնտեսական եւ բնապահպանական լրացուցիչ վերլուծություններ: Վերլուծությունների արդյունքներից կախված՝ այդ տաքացուցիչներին ներկայացվող էկոնախագծման պահանջները անհրաժեշտության դեպքում պետք է սահմանվեն հետագա փուլում.
- 10) Միությունում սենքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների 2005 թվականի տարեկան էներգասպառումը, ըստ հաշվարկների, կազմել է 12 089 ՊՋ (մոտ 289 մլն.տնհ), ինչն համարժեք է CO₂ -ի 698 մետրիկ տոննա արտանետմանը: Եթե հատուկ միջոցներ չձեռնարկվեն, ապա 2020 թվականին տարեկան էներգասպառումը, ըստ կանխատեսումների, կկազմի 10 688 ՊՋ: 2005 թվականին Միությունում սենքի տաքացուցիչների

եւ համակցված տաքացուցիչների օգտագործման հետ կապված՝ ազոտի օքսիդների տարեկան արտանետումները, ըստ հաշվարկների, համարժեք են եղել 821 կտ ծծմբի օքսիդին: Եթե հատուկ միջոցներ չձեռնարկվեն, ապա 2020 թվականին տարեկան արտանետումները, ըստ կանխատեսումների, համարժեք կլինեն 783 կտ ծծմբի օքսիդին: Նախապատրաստական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օգտագործման փուլում էներգասպառումը եւ սենքի տաքացուցիչների ու համակցված տաքացուցիչների՝ ազոտի օքսիդների արտանետումները կարելի է էապես նվազեցնել:

- 11) սենքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների էներգասպառումը կարող է կրճատվել՝ կիրառելով գոյություն ունեցող չարտոնագրված ծախսարդյունավետ տեխնոլոգիաներ, ինչի արդյունքում կարող են նվազել այդ արտադրանքի գնման եւ շահագործման ընդհանուր ծախսերը:
- 12) Միությունում կան բացօթյա ընդհանուր համակարգերով մոտ հինգ միլիոն կացարաններ: Բացօթյա ընդհանուր համակարգերով կացարաններում տեխնիկական պատճառներով հնարավոր չէ գոյություն ունեցող կաթսայով սենքի տաքացուցիչները եւ կաթսայով համակցված տաքացուցիչները փոխարինել բարձր արդյունավետությամբ կոնդենսացիոն կաթսաներով: Սույն կանոնակարգում նշված պահանջները թույլ են տալիս, որ այդպիսի կոնֆիգուրացիայի համար հատուկ նախագծված ոչ կոնդենսացիոն կաթսաները մնան շուկայում: նպատակն է խուսափել սպառողների կողմից կատարվող ոչ պատշաճ ծախսերից, ժամանակ տրամադրել արտադրողներին առավել արդյունավետ ջեռուցման տեխնոլոգիաների համար նախատեսված կաթսաներ արտադրելու համար եւ բավականաչափ ժամանակ տրամադրել անդամ պետություններին ազգային շինարարական նորմերը վերանայելու համար:
- 13) Ակնկալվում է, որ սույն կանոնակարգով եւ «Սենքի տաքացուցիչների, համակցված տաքացուցիչների, սենքի տաքացուցիչ, ջերմաստիճանի

կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների, ինչպես նաեւ համակցված տաքացուցիչ, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների էներգապիտակավորման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 18-ի թիվ 811/2013 պատվիրակված կանոնակարգով (ԵՄ) սահմանված էկոնախագծման պահանջների համակցված ազդեցության արդյունքում¹ էներգիայի տարեկան խնայողությունը, ըստ հաշվարկների, մինչեւ 2020 թվականը կկազմի 1 900 ՊՋ (մոտ 45 մլն.տնհ), ինչը համարժեք է CO₂-ի մոտ 110 մետրիկ տոննա արտանետումներին, ինչպես նաեւ կկրճատվեն ազոտի օքսիդի՝ 270 կտ ծծմբի օքսիդին համարժեք չափով տարեկան արտանետումները՝ ի համեմատություն այն իրավիճակի, թե ինչ կլիներ, եթե որեւէ միջոց չձեռնարկվեր.

- 14) էկոնախագծման պահանջներով պետք է ներդաշնակեցվեն Միության ամբողջ տարածքում սենքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների էներգասպառմանը, ծայնային հզորության մակարդակին եւ ազոտի օքսիդի արտանետումներին ներկայացվող պահանջները՝ այսպիսով նպաստելով ներքին շուկայի գործունեությանը եւ այդ արտադրանքի բնապահպանական ցուցանիշների բարելավմանը.
- 15) էկոնախագծման պահանջները չպետք է վերջնական սպառողի տեսանկյունից ազդեցություն ունենան սենքի տաքացուցիչների կամ համակցված տաքացուցիչների ֆունկցիոնալության կամ մատչելիության վրա եւ չպետք է բացասական ազդեցություն ունենան առողջության, անվտանգության կամ շրջակա միջավայրի վրա.

¹ Տե՛ս սույն պաշտոնական տեղեկագրի 1-ին էջը:

- 16) Էկոնախագծման պահանջները պետք է ներդրվեն աստիճանաբար՝ բավարար ժամանակ տալով արտադրողներին իրենց արտադրանքը սույն կանոնակարգին համապատասխան վերանախագծելու համար: Ժամկետը պետք է այնպիսին լինի, որ հաշվի առնվեն արտադրողների, մասնավորապես՝ փոքր եւ միջին ձեռնարկությունների կատարած ծախսերի հնարավոր կորուստները՝ միեւնույն ժամանակ ապահովելով սույն կանոնակարգի նպատակների ժամանակին իրականացումը.
- 17) Արտադրանքի պարամետրերը պետք է չափվեն եւ հաշվարկվեն՝ օգտագործելով հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդներ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման եւ հաշվարկման մեթոդների, այդ թվում՝ առկայության դեպքում՝ Հանձնաժողովի պահանջի հիման վրա ստանդարտացման եվրոպական կազմակերպությունների կողմից ընդունված ներդաշնակեցված ստանդարտների վրա՝ համաձայն «Եվրոպական ստանդարտացման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1025/2012 կանոնակարգով (ԵՄ) սահմանված ընթացակարգերի².
- 18) 2009/125/ԵՀ հրահանգի 8(2) հոդվածի համաձայն՝ սույն կանոնակարգով սահմանվում են, թե համապատասխանության գնահատման որ ընթացակարգերն են կիրառելի.
- 19) համապատասխանության ստուգման գործընթացը դյուրացնելու նպատակով արտադրողները պետք է 2009/125/ԵՀ հրահանգի IV եւ V հավելվածներում նշված տեխնիկական փաստաթղթերում տեղեկություն տրամադրեն այն մասով, որով այդ տեղեկությունն առնչվում է սույն կանոնակարգով սահմանված պահանջներին.
- 20) սենքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունն էլ ավելի նվազեցնելու համար

² ՊՏ L 316, 14.11.2012թ., էջ 12:

արտադրողները պետք է տեղեկություն տրամադրեն դրանց կազմատման, վերաշրջանառության եւ (կամ) օգտահանման մասին.

- 21) ի լրումն սույն կանոնակարգով սահմանված՝ պարտադիր իրավական ուժ ունեցող պահանջների՝ գոյություն ունեցող լավագույն տեխնոլոգիաների համար պետք է սահմանվեն կողմնորոշիչ հենանիշեր՝ սենքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների շահագործման ժամկետի ընթացքում դրանց էկոլոգիական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հեշտ հասանելիությունը եւ մատչելիությունն ապահովելու համար.
- 22) 92/42/ԵՏՀ հրահանգը, բացառությամբ դրա 7(2) եւ 8-րդ հոդվածների եւ III-V հավելվածների, պետք է ուժը կորցրած ճանաչել եւ սույն կանոնակարգով նոր դրույթներ սահմանել՝ ապահովելով, որ դրա գործողության ոլորտը կաթսաներից բացի տարածվի նաեւ տաքացուցիչների վրա՝ սենքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների էներգաարդյունավետությունն էլ ավելի բարելավելու, ինչպես նաեւ սենքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության այլ կարեւոր հայեցակետեր բարելավելու նպատակով.
- 23) սույն կանոնակարգով նախատեսված միջոցները համապատասխանում են 2009/125/ԵՀ հրահանգի 19(1) հոդվածում նշված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն կանոնակարգով սահմանվում են էկոնախագծման պահանջներ ≤ 400 կՎտ դրվածքային ջերմային հզորությամբ սենքի տաքացուցիչների եւ համակցված

տաքացուցիչների, այդ թվում՝ սենքի տաքացուցիչ, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների կամ համակցված տաքացուցիչ, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների կազմում ընդգրկված սենքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների շուկայահանման եւ (կամ) շահագործման նկատմամբ, ինչպես սահմանված է Հանձնաժողովի թիվ 811/2013 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) 2-րդ հոդվածում:

2. Սույն կանոնակարգը չի կիրառվում հետեւյալի նկատմամբ՝

- ա) հիմնականում կենսազանգվածից ստացվող գազային կամ հեղուկ վառելիքով աշխատելու համար հատուկ նախատեսված տաքացուցիչներ.
- բ) պինդ վառելիքով աշխատող տաքացուցիչներ.
- գ) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/75/ԵՄ հրահանգի շրջանակներում ընդգրկված տաքացուցիչներ¹.
- դ) միայն խմելու կամ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող տաք ջրի մատակարարման համար ջերմային էներգիա արտադրող տաքացուցիչներ.
- ե) տաքացուցիչներ, որոնք նախատեսված են գազային ջերմափոխանցման այնպիսի միջավայրի ջեռուցման եւ բաշխման համար, ինչպիսիք են գոլորշին կամ օդը.
- զ) համակցված արտադրության սենքի տաքացուցիչներ՝ 50 կՎտ կամ ավելի առավելագույն էլեկտրական հզորությամբ.
- է) տաքացուցիչների համար նախագծված ջերմագեներատորներ եւ տաքացուցիչների կորպուսներ, որոնք պետք է սարքավորվեն մինչեւ 2018 թվականի հունվարի 1-ը շուկայահանված այդպիսի

¹ ՊՏ L 334, 17.12.2010թ., էջ 17:

ջերմագեներատորներով՝ նմանատիպ ջերմագեներատորներն ու տաքացուցիչների կորպուսները փոխարինելու համար: Փոխարինող արտադրանքի կամ դրա փաթեթվածքի վրա պետք է հստակ նշված լինի այն տաքացուցիչը, որի համար այդ արտադրանքը նախատեսված է:

Հոդված 2

Սահմանումները

Ի հավելումն 2009/125/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածում տրված սահմանումների՝ սույն կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները.

- 1) «տաքացուցիչ» նշանակում է սենքի տաքացուցիչ կամ համակցված տաքացուցիչ.
- 2) «սենքի տաքացուցիչ» նշանակում է սարք, որը՝
 - ա) ջերմային էներգիա է հաղորդում ջրային ջեռուցման կենտրոնական համակարգին այնպիսի փակ տարածքում ներսի օդի ջերմաստիճանը ցանկալի մակարդակի հասցնելու եւ պահպանելու համար, ինչպիսիք են շենքը, բնակարանը կամ սենյակը, եւ
 - բ) համալրված է մեկ կամ ավելի ջերմագեներատորներով.
- 3) «համակցված տաքացուցիչ» նշանակում է սենքի տաքացուցիչ, որը նախատեսված է նաեւ տրված ժամանակահատվածում կոնկրետ ջերմաստիճանային մակարդակով, քանակով եւ հոսքի արագությամբ խմելու կամ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող տաք ջրի մատակարարման համակարգին ջերմային էներգիա հաղորդելու համար եւ միացված է խմելու կամ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող ջրի արտաքին աղբյուրին.
- 4) «ջրային ջեռուցման կենտրոնական համակարգ» նշանակում է համակարգ, որի դեպքում ջուրը՝ որպես ջերմափոխանցման միջավայր, օգտագործվում է

շենքերի կամ դրանց առանձին հատվածների սենքի ջեռուցման նպատակով կենտրոնական համակարգում արտադրված ջերմային էներգիան ջեռուցման սարքեր բաշխելու համար.

5) «ջերմագեներատոր» նշանակում է տաքացուցչի մաս, որը ջերմային էներգիան արտադրում է հետեւյալ գործընթացներից մեկի կամ մի քանիսի միջոցով՝

ա) հանածո վառելիքի եւ (կամ) կենսավառելիքի այրում.

բ) էլեկտրական դիմադրություն ունեցող ջերմատարերում Ջոուլի էֆեկտի կիրառում.

գ) օդից, ջրից կամ հողից շրջակա միջավայրի ջերմության եւ (կամ) արտանետվող ջերմության հավաքում.

ինչի արդյունքում տաքացուցչի համար նախագծված ջերմագեներատորը եւ տաքացուցչի կորպուսը, որը պետք է սարքավորվի այդպիսի ջերմագեներատորով, նույնպես համարվում է տաքացուցիչ.

6) «տաքացուցչի կորպուս» նշանակում է տաքացուցչի այն մասը, որը նախատեսված է դրա ներսում ջերմագեներատոր տեղադրելու համար.

7) «դրվածքային ջերմային հզորություն» (*Prated*) նշանակում է փորձարկման ստանդարտ պայմաններում սենքին եւ կիրառելիության դեպքում՝ ջրին ջերմային էներգիա հաղորդելիս տաքացուցչի հայտարարված ջերմային հզորությունը՝ արտահայտված կՎտ-ով. ջերմային պոմպով սենքի տաքացուցիչների եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների դեպքում դրվածքային ջերմային հզորությունը սահմանելու համար ստանդարտ դրվածքային պայմանները III հավելվածի 4-րդ աղյուսակում նշված սկզբնական նախագծային պայմաններն են.

- 8) «ստանդարտ դրվածքային պայմաններ» նշանակում է տաքացուցիչների շահագործման պայմաններ՝ դրվածքային ջերմային հզորությունը, սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը, ջրային ջեռուցման էներգաարդյունավետությունը, ձայնային հզորության մակարդակը եւ ազոտի օքսիդի արտանետումները սահմանելու համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում.
- 9) «կենսազանգված» նշանակում է գյուղատնտեսական (ներառյալ՝ բուսական եւ կենդանական ծագման նյութերը), անտառաբուծության եւ հարակից արդյունաբերություններից (ներառյալ՝ ձկնաբուծությունը եւ ջրային կուլտուրաները) կենսաբանական ծագման արտադրանքի, թափոնների եւ մնացորդների կենսաբանորեն քայքայվող մասը, ինչպես նաեւ արդյունաբերական եւ քաղաքային թափոնների կենսաբանորեն քայքայվող մասը.
- 10) «կենսավառելիք» նշանակում է կենսազանգվածից ստացվող գազային կամ հեղուկ վառելիք.
- 11) «հանածո վառելիք» նշանակում է գազային կամ հեղուկ հանածո վառելիք.
- 12) «կաթսայով սենքի տաքացուցիչ» նշանակում է սենքի տաքացուցիչ, որը հանածո վառելիքի եւ (կամ) կենսավառելիքի այրման եւ (կամ) էլեկտրական դիմադրություն ունեցող ջերմատարերում Ջոուլի էֆեկտի կիրառման միջոցով արտադրում է ջերմային էներգիա.
- 13) «կաթսայով համակցված տաքացուցիչ» նշանակում է կաթսայով սենքի տաքացուցիչ, որը նախատեսված է նաեւ տրված ժամանակահատվածում կոնկրետ ջերմաստիճանային մակարդակով, քանակով եւ հոսքի արագությամբ խմելու կամ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող տաք ջրի մատակարարման համակարգին ջերմային էներգիա հաղորդելու համար եւ միացված է խմելու կամ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող ջրի արտաքին աղբյուրին.

- 14) «Էլեկտրական կաթսայով սենքի տաքացուցիչ» նշանակում է կաթսայով սենքի տաքացուցիչ, որը ջերմային էներգիա է արտադրում միայն էլեկտրական դիմադրություն ունեցող ջերմատարերում Ջոուլի էֆեկտի կիրառման միջոցով.
- 15) «Էլեկտրական կաթսայով համակցված տաքացուցիչ» նշանակում է կաթսայով համակցված տաքացուցիչ, որը ջերմային էներգիա է արտադրում միայն էլեկտրական դիմադրություն ունեցող ջերմատարերում Ջոուլի էֆեկտի կիրառման միջոցով.
- 16) «համակցված արտադրության սենքի տաքացուցիչ» նշանակում է սենքի տաքացուցիչ, որը մեկ գործընթացում միաժամանակ արտադրում է թե՛ ջերմային էներգիա, թե՛ էլեկտրաէներգիա.
- 17) «ջերմային պոմպով սենքի տաքացուցիչ» նշանակում է սենքի տաքացուցիչ, որը ջերմային էներգիա արտադրելու համար օգտագործում է օդից, ջրից կամ հողից շրջակա միջավայրի ջերմությունը եւ (կամ) արտանետվող ջերմությունը. ջերմային պոմպով սենքի տաքացուցիչը կարող է սարքավորվել մեկ կամ ավելի լրացուցիչ տաքացուցիչներով՝ կիրառելով Ջոուլի էֆեկտն էլեկտրական դիմադրություն ունեցող ջերմատարերում կամ օգտագործելով հանածո վառելիքի եւ (կամ) կենսավառելիքի այրումը.
- 18) «ջերմային պոմպով համակցված տաքացուցիչ» նշանակում է ջերմային պոմպով սենքի տաքացուցիչ, որը նախատեսված է նաեւ տրված ժամանակահատվածում կոնկրետ ջերմաստիճանային մակարդակով, քանակով եւ հոսքի արագությամբ խմելու կամ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող տաք ջրի մատակարարման համակարգին ջերմային էներգիա հաղորդելու համար եւ միացված է խմելու կամ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող ջրի արտաքին աղբյուրին.

- 19) «լրացուցիչ տաքացուցիչ» նշանակում է ոչ առաջնային տաքացուցիչ, որը ջերմային էներգիա արտադրում է այն դեպքերում, երբ ջերմային էներգիայի պահանջարկն ավելի մեծ է, քան առաջնային տաքացուցչի դրվածքային ջերմային հզորությունը.
- 20) «սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետություն» (η_s) նշանակում է տաքացուցչի դեպքում սահմանված ջեռուցման սեզոնի համար սենքի ջեռուցման պահանջարկի եւ այս պահանջարկն ապահովելու համար անհրաժեշտ էներգիայի տարեկան սպառման հարաբերակցությունը՝ արտահայտված %-ով.
- 21) «ջրային ջեռուցման էներգաարդյունավետություն» (η_{wh}) նշանակում է խմելու կամ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող ջրում համակցված տաքացուցչի կողմից արտադրված օգտակար էներգիայի եւ դրա արտադրության համար պահանջվող էներգիայի հարաբերակցությունը՝ արտահայտված %-ով.
- 22) «ծայնային հզորության մակարդակ» (L_{WA}) նշանակում է A կորով կշռված ծայնի հզորության մակարդակը ներսում եւ (կամ) դրսում՝ արտահայտված դԲ-ով.
- 23) «փոխարկման գործակից» ($\Phi\Phi$) նշանակում է գործակից, որն արտացոլում է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012/27/ԵՄ հրահանգում նշված՝ ԵՄ-ում էլեկտրաէներգիայի արտադրության օգտակար գործողության միջին գործակցի գնահատված 40 %-ը¹. փոխարկման գործակցի արժեքն է՝ $\Phi\Phi = 2,5$:

II-V հավելվածների նպատակներով I հավելվածում տրված են լրացուցիչ սահմանումներ:

Հոդված 3

Էկոնախագծման պահանջները եւ ժամանակացույցը

1. Տաքացուցիչներին ներկայացվող էկոնախագծման պահանջները սահմանված են II հավելվածում:
2. Էկոնախագծման յուրաքանչյուր պահանջ կիրառվում է հետեւյալ ժամանակացույցին համապատասխան՝
 - ա) 2015 թվականի սեպտեմբերի 26-ից՝
 - i) տաքացուցիչները պետք է համապատասխանեն II հավելվածի 1(ա), 3-րդ եւ 5-րդ կետերով նախատեսված պահանջներին.
 - ii) համակցված տաքացուցիչները պետք է համապատասխանեն II հավելվածի 2(ա) կետով նախատեսված պահանջներին.
 - բ) 2017 թվականի սեպտեմբերի 26-ից՝
 - i) սենքի էլեկտրական տաքացուցիչները, համակցված էլեկտրական տաքացուցիչները, համակցված արտադրության սենքի տաքացուցիչները, ջերմային պոմպով սենքի տաքացուցիչները եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչները պետք է համապատասխանեն II հավելվածի 1(բ) կետով նախատեսված պահանջներին.
 - ii) համակցված տաքացուցիչները պետք է համապատասխանեն II հավելվածի 2(բ) կետով նախատեսված պահանջներին.
 - գ) 2018 թվականի սեպտեմբերի 26-ից տաքացուցիչները պետք է համապատասխանեն II հավելվածի 4(ա) կետով նախատեսված պահանջներին:
3. Էկոնախագծման պահանջներին համապատասխանությունը չափվում էւ հաշվարկվում է III հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան:

Հոդված 4

Համապատասխանության գնահատումը

1. 2009/125/ԵՀ հրահանգի 8(2) հոդվածում նշված համապատասխանության գնահատման ընթացակարգը տվյալ հրահանգի IV հավելվածով սահմանված նախագծման աշխատանքների հսկման ներքին համակարգն է կամ տվյալ հրահանգի V հավելվածով սահմանված կառավարման համակարգը՝ չհակասելով Խորհրդի 92/42/ԵՏՀ հրահանգի 7(2) ու 8-րդ հոդվածներին եւ III-V հավելվածներին:
2. Համապատասխանության գնահատման նպատակներով տեխնիկական փաստաթղթերը պարունակում են սույն կանոնակարգի II հավելվածի 5(բ) կետով սահմանված՝ արտադրանքի տեխնիկական բնութագիրը:

Հոդված 5

Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը

Սույն կանոնակարգի II հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով 2009/125/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված շուկայի վերահսկողության ստուգումներ իրականացնելիս անդամ պետությունների մարմինները կիրառում են սույն կանոնակարգի IV հավելվածով սահմանված ստուգումների ընթացակարգը:

Հոդված 6

Կողմնորոշիչ հենանիշերը

Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին շուկայում առկա նվազ էներգատար տաքացուցիչների մասով կողմնորոշիչ հենանիշերը սահմանված են V հավելվածում:

Հոդված 7

Վերանայումը

Հանձնաժողովը վերանայում է սույն կանոնակարգը՝ ելնելով տաքացուցիչների հետ կապված տեխնոլոգիական առաջընթացից, եւ այդ վերանայման արդյունքներն էկոնախազձման հարցերով խորհրդատվական ֆորում է ներկայացնում ոչ ուշ, քան սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո՝ հինգ տարվա ընթացքում: Վերանայումը ներառում է մասնավորապես հետեւյալ հայեցակետերի գնահատումը՝

- ա) սառնազդակների հետ կապված ջերմոցային գազերի արտանետումներին ներկայացվող էկոնախազձման պահանջներ սահմանելու նպատակահարմարությունը.
- բ) մշակման փուլում չափման մեթոդների հիման վրա ածխածնի մոնօքսիդի, ածխաջրածնի եւ պինդ մասնիկների արտանետումների նկատմամբ էկոնախազձման պահանջների մակարդակը, որ կարելի է ներկայացնել.
- գ) կաթսայով սենքի տաքացուցիչների եւ կաթսայով համակցված տաքացուցիչների էներգաարդյունավետության, ձայնային հզորության մակարդակի եւ ազոտի օքսիդի արտանետումների նկատմամբ էկոնախազձման առավել խիստ պահանջներ սահմանելու նպատակահարմարությունը.
- դ) հիմնականում կենսազանգվածից ստացվող գազային կամ հեղուկ վառելիքով աշխատելու համար հատուկ նախազձված տաքացուցիչների նկատմամբ էկոնախազձման պահանջներ սահմանելու նպատակահարմարությունը.
- ե) փոխարկման գործակցի արժեքի հավաստիությունը.
- զ) երրորդ կողմի հավաստագրման նպատակահարմարությունը:

Հոդված 8

Անցումային դրույթներ

1. Մինչեւ 2015 թվականի սեպտեմբերի 26-ն անդամ պետությունները կարող են թույլատրել այն տաքացուցիչների շուկայահանումն ու շահագործումը, որոնք համապատասխանում են գործող ազգային դրույթներին, երբ սույն կանոնակարգն ընդունվում է սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության, ջրային ջեռուցման էներգաարդյունավետության եւ ձայնային հզորության մակարդակի մասով:
2. Մինչեւ 2018 թվականի սեպտեմբերի 26-ն անդամ պետությունները կարող են թույլատրել այն տաքացուցիչների շուկայահանումն ու շահագործումը, որոնք համապատասխանում են գործող ազգային դրույթներին, երբ սույն կանոնակարգն ընդունվում է ազրտի օբսիդի արտանետումների մասով:

Հոդված 9

Ուժը կորցրած ճանաչելը

Խորհրդի 92/42/ԵՏՀ հրահանգը, բացառությամբ դրա 7(2) եւ 8-րդ հոդվածների եւ դրա III-V հավելվածների, ուժը կորցրած է ճանաչվում՝ չսահմանափակելով անդամ պետությունների՝ այդ հրահանգն ազգային օրենսդրության մեջ տեղայնացնելու եւ կիրառելու հետ կապված պարտավորությունները, քանի դեռ չեն սկսել գործել սույն կանոնակարգի II հավելվածում սահմանված էկոնախագծման պահանջները:

Հոդված 10

Ուժի մեջ մտնելը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակման օրվան հաջորդող քսաներորդ օրը:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2013 թվականի օգոստոսի 2-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժոզե Մանուել ԲԱՂՈՋՈՒ

*ՀԱՎԵԼՎԱԾ 20***II-V հավելվածների նպատակներով կիրառվող սահմանումները**

II-V հավելվածների նպատակով կիրառվում են հետևյալ սահմանումները.

Տաքացուցիչներին առնչվող սահմանումները

- 1) «սպասման ռեժիմ» նշանակում է վիճակ, որի դեպքում տաքացուցիչը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին, նախատեսված ձեռով աշխատելու համար ծախսում է էլեկտրասնուցման աղբյուրից ստացվող էներգիան եւ կատարում է միայն հետևյալ գործառույթները, որոնք կարող են շարունակվել անորոշ ժամանակով՝ վերաակտիվացման գործառույթ կամ վերաակտիվացման գործառույթ եւ միայն միացված վերաակտիվացման գործառույթի նշում եւ (կամ) տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում ցուցասարքի վրա.
- 2) «սպասման ռեժիմում էներգասպառում» (P_{SB}) նշանակում է տաքացուցչի էներգասպառումը սպասման ռեժիմում՝ արտահայտված կՎտ-ով.
- 3) «միջին կլիմայական պայմաններ» նշանակում է Ստրասբուրգ քաղաքին բնորոշ ջերմաստիճանային պայմաններ.
- 4) «ջերմաստիճանի կարգավորման սարք» նշանակում է սարք, որի միջոցով ներսի օդի ցանկալի ջերմաստիճանի պարամետրերի եւ ժամանակացույցի մասով կապ է հաստատվում վերջնական սպառողների հետ, եւ համապատասխան տվյալները հաղորդվում են տաքացուցչի ինտերֆեյս, ինչպես օրինակ՝ կենտրոնական պրոցեսոր՝ այսպիսով նպաստելով ներսի օդի ջերմաստիճանի (ջերմաստիճանների) կարգավորմանը.
- 5) «այրման ջերմատվության արժեք» (U_{2U}) նշանակում է վառելիքի միավոր քանակից անջատված ընդհանուր ջերմաքանակը, երբ այդ վառելիքն

ամբողջությամբ այրվում է թթվածնի հետ, եւ երբ այրման արգասիքների ջերմաստիճանը վերադառնում է շրջակա միջավայրի ջերմաստիճանին. այս քանակը ներառում է վառելիքում պարունակվող ցանկացած ջրային գոլորշու եւ վառելիքում պարունակվող ցանկացած ջրածնի այրման հետեւանքով առաջացած ջրային գոլորշու խտացված ջերմությունը.

- 6) «համարժեք մոդել» նշանակում է մոդել, որը շուկայահանվել է II հավելվածի 5-րդ կետում բերված 1-ին կամ 2-րդ աղյուսակներում (կիրառելիության դեպքում) սահմանված տեխնիկական նույն պարամետրերով, ինչ միեւնույն արտադրողի կողմից շուկայահանված մեկ այլ մոդել.

Կաթսայով սենքի տաքացուցիչներին, կաթսայով համակցված տաքացուցիչներին եւ համակցված արտադրության սենքի տաքացուցիչներին առնչվող սահմանումները

- 7) «վառելիքով աշխատող կաթսայով սենքի տաքացուցիչ» նշանակում է կաթսայով սենքի տաքացուցիչ, որը հանածո վառելիքի եւ (կամ) կենսավառելիքի այրման միջոցով արտադրում է ջերմային էներգիա, եւ որը կարող է սարքավորվել մեկ կամ ավելի լրացուցիչ ջերմագեներատորներով՝ կիրառելով Ջոուլի էֆեկտն էլեկտրական դիմադրություն ունեցող ջերմատարերում.
- 8) «վառելիքով աշխատող կաթսայով համակցված տաքացուցիչ» նշանակում է կաթսայով համակցված տաքացուցիչ, որը հանածո վառելիքի եւ (կամ) կենսավառելիքի այրման միջոցով արտադրում է ջերմային էներգիա, եւ որը կարող է սարքավորվել մեկ կամ ավելի լրացուցիչ ջերմագեներատորներով՝ կիրառելով Ջոուլի էֆեկտն էլեկտրական դիմադրություն ունեցող ջերմատարերում.
- 9) «B1 տեսակի կաթսա» նշանակում է վառելիքով աշխատող կաթսայով սենքի տաքացուցիչ՝ քարշուժի դեֆլեկտորով, որը նախատեսված է օդի բնական

քարշուժով օգատարին միացվելու համար, որն այրման մնացորդները դուրս է բերում այն սենյակից, որտեղ տեղադրված է վառելիքով աշխատող կաթսայով սենքի տաքացուցիչը, եւ այրման համար անհրաժեշտ օդն անմիջապես հեռացնում է այդ սենյակից. B1 տեսակի կաթսան շուկայահանվում է միայն որպես B1 տեսակի կաթսա.

10) «B1 տեսակի համակցված կաթսա» նշանակում է վառելիքով աշխատող կաթսայով համակցված տաքացուցիչ՝ քարշուժի դեֆլեկտորով, որը նախատեսված է օդի բնական քարշուժով օգատարին միացվելու համար, որն այրման մնացորդները դուրս է բերում այն սենյակից, որտեղ տեղադրված է վառելիքով աշխատող կաթսայով համակցված տաքացուցիչը, եւ այրման համար անհրաժեշտ օդն անմիջապես հեռացնում է այդ սենյակից. B1 տեսակի համակցված կաթսան շուկայահանվում է միայն որպես B1 տեսակի համակցված կաթսա.

11) «սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունն ակտիվ ռեժիմում» (*ηson*) նշանակում է՝

— վառելիքով աշխատող կաթսայով սենքի տաքացուցիչների եւ վառելիքով աշխատող կաթսայով համակցված տաքացուցիչների համար՝ դրվածքային ջերմային հզորության դեպքում օգտակար արդյունավետության եւ դրվածքային ջերմային հզորության 30 %-ի դեպքում օգտակար արդյունավետության կշռված միջինը՝ արտահայտված %-ով.

— էլեկտրական կաթսայով սենքի տաքացուցիչների եւ էլեկտրական կաթսայով համակցված տաքացուցիչների համար՝ դրվածքային ջերմային հզորության դեպքում օգտակար արդյունավետությունը՝ արտահայտված %-ով.

— համակցված արտադրության սենքի տաքացուցիչների համար, որոնք սարքավորված չեն լրացուցիչ տաքացուցիչներով՝ դրվածքային

ջերմային հզորության դեպքում օգտակար արդյունավետությունը՝ արտահայտված %-ով.

— լրացուցիչ տաքացուցիչներով սարքավորված՝ համակցված արտադրության սենքի տաքացուցիչների համար՝ ապակտիվացված լրացուցիչ տաքացուցիչով դրվածքային ջերմային հզորության դեպքում օգտակար արդյունավետության եւ ակտիվացված լրացուցիչ տաքացուցիչով դրվածքային ջերմային հզորության դեպքում օգտակար արդյունավետության կշռված միջինը՝ արտահայտված %-ով.

- 12) «օգտակար արդյունավետություն» (η) նշանակում է կաթսայով սենքի տաքացուցչի, կաթսայով համակցված տաքացուցչի կամ համակցված արտադրության սենքի տաքացուցչի օգտակար ջերմային հզորության եւ էներգիայի ընդհանուր սպառման հարաբերակցությունը՝ արտահայտված %-ով, ընդ որում, էներգիայի ընդհանուր սպառումն արտահայտվում է *ԱՋԱ-ով* եւ (կամ) վերջնական էներգիայով՝ բազմապատկած *ՓԳ-ով*.
- 13) «օգտակար ջերմային հզորություն» (P) նշանակում է կաթսայով սենքի տաքացուցչի, կաթսայով համակցված տաքացուցչի կամ համակցված արտադրության սենքի տաքացուցչի՝ ջերմակրին փոխանցված ջերմային հզորությունը՝ արտահայտված կՎտ-ով.
- 14) «էլեկտրաարդյունավետություն» (η_{el}) նշանակում է համակցված արտադրության սենքի տաքացուցչի էլեկտրաէներգիայի արտադրության եւ էներգիայի ընդհանուր սպառման հարաբերակցությունը՝ արտահայտված %-ով, ընդ որում, էներգիայի ընդհանուր սպառումն արտահայտվում է *ԱՋԱ-ով* եւ (կամ) վերջնական էներգիայով՝ բազմապատկած *ՓԳ-ով*.
- 15) «վառքի հրաձորանի էներգասպառում» (P_{ign}) նշանակում է հիմնական հրաձորանի վառքի համար նախատեսված հրաձորանի էներգասպառումը՝ արտահայտված Վտ-ով՝ *ԱՋԱ-ի* հաշվարկով.

- 16) «կոնդենսացիոն կաթսա» նշանակում է կաթսայով սենքի տաքացուցիչ կամ կաթսայով համակցված տաքացուցիչ, որը շահագործման բնականոն պայմաններում եւ շահագործման ընթացքում ջրի կոնկրետ ջերմաստիճանային ռեժիմում մասամբ կոնդենսացնում է այրման արգասիքներում առկա ջրային գոլորշին՝ ջեռուցման նպատակներով այդ ջրային գոլորշու տեսակարար ջերմությունն օգտագործելու համար.
- 17) «էլեկտրաէներգիայի լրացուցիչ սպառում» նշանակում է կաթսայով սենքի տաքացուցչի, կաթսայով համակցված տաքացուցչի կամ համակցված արտադրության սենքի տաքացուցչի նախանշված ձեով շահագործման համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի տարեկան ծավալը, որը հաշվարկվում է էլեկտրաէներգիայի սպառման ծավալով՝ լրիվ բեռնվածքով (*elmax*), մասնակի բեռնվածքով աշխատանքի դեպքում (*elmin*), սպասման ռեժիմում եւ յուրաքանչյուր ռեժիմում սովորական աշխատանքային ժամերին. այն արտահայտվում է կՎտժ-ով՝ վերջնական էներգիայի հաշվարկով.
- 18) «սպասման ռեժիմում ջերմության կորուստ» (P_{stby}) նշանակում է կաթսայով սենքի տաքացուցչի, կաթսայով համակցված տաքացուցչի կամ համակցված արտադրության սենքի տաքացուցչի՝ առանց ջերմության պահանջի շահագործման ռեժիմներում ջերմության կորուստը՝ արտահայտված կՎտ-ով.

Ջերմային պոմպով սենքի տաքացուցիչներին եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչներին առնչվող սահմանումները

- (19) «դրսի օդի ջերմաստիճան» (T_j) նշանակում է դրսի օդի ջերմաստիճանը՝ ըստ չոր ջերմաչափի, որն արտահայտվում է Յելսիուսի սանդղակով. հարաբերական խոնավությունը կարող է նշվել թաց ջերմաչափի համապատասխան ջերմաստիճանով.
- 20) «արդյունավետության դրվածքային գործակից» ($U\varphi_{rated}$) կամ «առաջնային էներգիայի դրվածքային գործակից» ($U\epsilon\varphi_{rated}$) նշանակում է կՎտ-ով

արտահայտված՝ հայտարարված ջերմունակություն՝ բաժանած ստանդարտ դրվածքային պայմաններում մատակարարվող ջերմության համար էներգիայի սպառման ծավալին, որն արտահայտվում է կՎտ-ով՝ *ԱՋԱ-ի* հաշվարկով, եւ (կամ) կՎտ-ով վերջնական էներգիայի հաշվարկով՝ բազմապատկած *ՓԳ-ով*։

- 21) «սկզբնական նախագծային պայմաններ» նշանակում է սկզբնական նախագծային ջերմաստիճանի, երկարժեք ջերմաստիճանի եւ շահագործման առավելագույն սահմանային ջերմաստիճանի համակցությունը, ինչպես սահմանված է VII հավելվածի 4-րդ աղյուսակում։
- 22) «սկզբնական նախագծային ջերմաստիճան» (*Tdesignh*) նշանակում է VII հավելվածի 4-րդ աղյուսակում սահմանված կարգով Յելսիուսի սանդղակով արտահայտված դրսի օդի ջերմաստիճան, որի դեպքում մասնակի բեռնվածքի գործակիցը հավասար է 1-ի։
- 23) «մասնակի բեռնվածքի գործակից» ($pl(T_j)$) նշանակում է դրսի օդի մինուս 16 °C ջերմաստիճանը բաժանած սկզբնական նախագծային մինուս 16 °C ջերմաստիճանի։
- 24) «ջեռուցման սեզոն» նշանակում է շահագործման համալիր պայմաններ, որոնցով մեկ բինի հաշվարկով նկարագրվում են դրսի օդի ջերմաստիճանների եւ այն ժամերի քանակի համակցությունը, երբ այդ ջերմաստիճաններն առկա են տվյալ սեզոնում։
- 25) «բին» (*bin_j*) նշանակում է դրսի օդի ջերմաստիճանի (T_j) եւ բին ժամերի համակցությունը՝ III հավելվածի 5-րդ աղյուսակում սահմանված կարգով։
- 26) «բին ժամեր» (H_j) նշանակում է յուրաքանչյուր տարվա ժամերով արտահայտված՝ յուրաքանչյուր սեզոնի այն ժամերը, որոնց ընթացքում յուրաքանչյուր բինի համար առկա է դրսի օդի ջերմաստիճանը՝ III հավելվածի 5-րդ աղյուսակում սահմանված կարգով։

- 27) «ջեռուցման մասնակի բեռնվածք» ($Ph(T_j)$) նշանակում է դրսի օդի կոնկրետ ջերմաստիճանի պայմաններում ջերմային բեռնվածքը, որը հաշվարկվում է հետևյալ ձևով՝ նախագծային բեռնվածք՝ բազմապատկած մասնակի բեռնվածքի գործակցով, եւ արտահայտվում է կՎտ-ով.
- 28) «արդյունավետության սեզոնային գործակից» (UUF) կամ «առաջնային էներգիայի սեզոնային գործակից» ($UEUF$) նշանակում է ջերմային պոմպով սենքի տաքացուցչի կամ էլեկտրաէներգիայով աշխատող՝ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի ընդհանուր գործակից կամ ջերմային պոմպով սենքի տաքացուցչի կամ նախանշված ջեռուցման սեզոնին բնորոշ վառելիքով աշխատող՝ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի առաջնային էներգիայի ընդհանուր գործակից, որը հաշվարկվում է հետևյալ ձևով՝ սկզբնական տարեկան ջերմային պահանջարկ՝ բաժանած էներգիայի տարեկան սպառման ծավալին.
- 29) «սկզբնական տարեկան ջեռուցման պահանջարկ» (Q_H) նշանակում է նախանշված ջեռուցման սեզոնի համար սկզբնական ջերմային պահանջարկ, որը պետք է որպես հիմք օգտագործվի UUF -ի կամ $UEUF$ -ի հաշվարկման համար եւ հաշվարկվի որպես ջեռուցման նախագծային բեռնվածքի եւ ակտիվ ռեժիմում տարեկան համարժեք ժամերի արտադրյալ, որն արտահայտվում է կՎտժ-ով.
- 30) «էներգիայի տարեկան սպառում» (Q_{HE}) նշանակում է նախանշված ջեռուցման սեզոնի համար սկզբնական տարեկան ջեռուցման պահանջարկը բավարարելու համար անհրաժեշտ էներգասպառում՝ արտահայտված կՎՏժ-ով՝ $UEUF$ -ի հաշվարկով, եւ (կամ) կՎտժ-ով՝ վերջնական էներգիայի հաշվարկով.
- 31) «ակտիվ ռեժիմում տարեկան համարժեք ժամեր» (H_{HE}) նշանակում է տարեկան ենթադրյալ այն ժամաքանակը, որի ընթացքում ջերմային պոմպով սենքի տաքացուցիչը կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչը

պետք է ապահովի ջեռուցման նախագծային բեռնվածքը՝ սկզբնական տարեկան ջերմային պահանջարկը բավարարելու համար, այն արտահայտվում է σ -ով.

- 32) «ակտիվ ռեժիմում արդյունավետության գործակից» (UUF_{on}) կամ «ակտիվ ռեժիմում առաջնային էներգիայի գործակից» ($UEUF_{on}$) նշանակում է ակտիվ ռեժիմում էլեկտրաէներգիայով աշխատող՝ ջերմային պոմպով սենքի տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի արդյունավետության միջին գործակից կամ նախանշված ջեռուցման սեզոնում ակտիվ ռեժիմում վառելիքով աշխատող՝ ջերմային պոմպով սենքի տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի առաջնային էներգիայի միջին գործակից.
- 33) «լրացուցիչ ջերմունակություն» ($sup(T_j)$) նշանակում է լրացուցիչ տաքացուցչի ջերմային դրվածքային հզորություն՝ P_{sup} , որը լրացնում է հայտարարված ջերմունակությունը ջեռուցման մասնակի բեռնվածքը բավարարելու համար այն դեպքում, երբ հայտարարված ջերմունակությունը ջեռուցման մասնակի բեռնվածքից պակաս է. այն արտահայտվում է կՎտ-ով.
- 34) «բինին բնորոշ արդյունավետության գործակից» ($U_{bin}(T_j)$) կամ «բինին բնորոշ առաջնային էներգիայի գործակից» ($UE_{bin}(T_j)$) նշանակում է էլեկտրաէներգիայով աշխատող՝ ջերմային պոմպով սենքի տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի արդյունավետության գործակից կամ սեզոնին յուրաքանչյուր բինին բնորոշ վառելիքով աշխատող՝ ջերմային պոմպով սենքի տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի առաջնային էներգիայի գործակից, որը ստացվում է ջեռուցման մասնակի բեռնվածքից, հայտարարված ջերմունակությունից ու նշված բիների համար արդյունավետության հայտարարված գործակցից եւ այլ բիների համար հաշվարկվում է միջարկման կամ արտարկման միջոցով, անհրաժեշտության դեպքում ճշգրտվում է նվազման գործակցով.

- 35) «հայտարարված ջերմունակություն» ($Pdh(T_j)$) նշանակում է ջերմային հզորություն, որ ջերմային պոմպով սենքի տաքացուցիչը կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչը կարող է ապահովել դրսի օդի ջերմաստիճանի համար. այն արտահայտվում է կՎտ-ով.
- 36) «հզորության հսկողություն» նշանակում է ջերմային պոմպով սենքի տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի՝ սառեցման շրջափուլն իրականացնելու համար անհրաժեշտ հեղուկներից առնվազն մեկի հոսքի ծավալային արագությունը փոփոխելու միջոցով դրա հզորությունը փոխելու ունակություն, պետք է նշվի որպես «ֆիքսված» այն դեպքում, երբ հոսքի ծավալային արագությունը չի կարող փոփոխվել կամ «փոփոխական» այն դեպքում, երբ հոսքի ծավալային արագությունը փոփոխվում է կամ տատանվում է երկու կամ ավելի քայլերի հաջորդականությամբ.
- 37) «ջեռուցման նախագծային բեռնվածք» ($Pdesignh$) նշանակում է սկզբնական նախագծային ջերմաստիճանի պայմաններում ջերմային պոմպով սենքի տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի դրվածքային ջերմային հզորություն ($Prated$), ընդ որում, ջեռուցման նախագծային բեռնվածքը հավասար է ջեռուցման մասնակի բեռնվածքին, որի դեպքում դրսի օդի ջերմաստիճանը հավասար է սկզբնական նախագծային ջերմաստիճանին. այն արտահայտվում է կՎտ-ով.
- 38) «արդյունավետության հայտարարված գործակից» ($U\varphi d(T_j)$) կամ «առաջնային էներգիայի հայտարարված գործակից» ($U\epsilon\varphi d(T_j)$) նշանակում է սահմանափակ թվով կոնկրետ բիների դեպքում արդյունավետության գործակից կամ առաջնային էներգիայի գործակից.
- 39) «երկարժեք ջերմաստիճան» (T_{biv}) նշանակում է ջեռուցման համար մատակարարի կողմից հայտարարված դրսի օդի այն ջերմաստիճանը, որի դեպքում հայտարարված ջերմունակությունը հավասար է ջեռուցման

մասնակի բեռնվածքին, իսկ դրանից ցածր պայմաններում հայտարարված ջերմունակության համար անհրաժեշտ է լրացուցիչ ջերմունակություն՝ ջեռուցման մասնակի բեռնվածքը բավարարելու համար. այն արտահայտվում է Ցելսիուսի սանդղակով.

- 40) «շահագործման սահմանային ջերմաստիճան» (*TOL*) նշանակում է ջեռուցման համար մատակարարի կողմից հայտարարված դրսի օդի այն ջերմաստիճանը, որից ցածր պայմաններում «օդ-ջուր» տեսակի ջերմային պոմպով սենքի տաքացուցիչը կամ «օդ-ջուր» տեսակի ջերմային պոմպով համակցված տաքացուցիչը չի կարողանա ապահովել որեւէ ջերմային հզորություն, իսկ հայտարարված ջերմունակությունը հավասար է զրոյի. այն արտահայտվում է Ցելսիուսի սանդղակով.
- 41) «ցանցային ջրով շահագործման սահմանային ջերմաստիճան» (*WTOL*) նշանակում է ջեռուցման համար մատակարարի կողմից հայտարարված՝ բաց թողնվող ջրի այն ջերմաստիճանը, որից բարձր պայմաններում ջերմային պոմպով սենքի տաքացուցիչը կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչը չի կարողանա ապահովել որեւէ ջերմային հզորություն, իսկ հայտարարված ջերմունակությունը հավասար է զրոյի. այն արտահայտվում է Ցելսիուսի սանդղակով.
- 42) «ցիկլային աշխատանքի ընթացքում ջերմունակություն» (*Pcyc*) նշանակում է ջեռուցման մասով ցիկլային աշխատանքի փորձարկումների ընթացքում ընդհանուր ջերմային հզորություն՝ արտահայտված կՎտ-ով.
- 43) «ցիկլային աշխատանքի ընթացքում արդյունավետություն» (*UԳcyc* կամ *UէԳcyc*) նշանակում է ցիկլային աշխատանքի փորձարկումների ընթացքում արդյունավետության միջին գործակից կամ առաջնային էներգիայի միջին գործակից, որը հաշվարկվում է հետեւյալ ձեւով՝ ժամանակահատվածի ընթացքում կՎտժ-ով արտահայտված ընդհանուր ջերմային հզորությունը բաժանած միեւնույն ժամանակահատվածի ընթացքում էներգիայի

ընդհանուր սպառման արժեքին, արտահայտվում է կՎտժ-ով՝ *ԱՋԱ-ի հաշվարկով*, եւ (կամ) կՎտժ-ով՝ վերջնական էներգիայի հաշվարկով՝ բազմապատկած *ՓԳ-ով*.

- 44) «նվազման գործակից» (*Cdh*) նշանակում է ջերմային պոմպով սենքի տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի ցիկլային աշխատանքի հետեւանքով արդյունավետության կորստի չափը. եթե *Cdh*-ը չի սահմանվում չափման միջոցով, ապա ընդհանուր նվազման գործակիցը կազմում է $Cdh = 0,9$.
- 45) «ակտիվ ռեժիմ» նշանակում է փակ տարածքում ջերմային բեռնվածքով ժամերին եւ ակտիվացված ջեռուցման ֆունկցիային համապատասխանող վիճակ. այս վիճակը կարող է ներառել ջերմային պոմպով սենքի տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի ցիկլային աշխատանքը՝ դրսի օդի անհրաժեշտ ջերմաստիճանն ապահովելու կամ պահպանելու համար.
- 46) «անջատված ռեժիմ» նշանակում է վիճակ, երբ ջերմային պոմպով սենքի տաքացուցիչը կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչը միացված է էլեկտրասնուցման ցանցին եւ չի կատարում որեւէ ֆունկցիա, այդ թվում՝ վիճակ, երբ միայն ցույց է տալիս, որ գտնվում է անջատված ռեժիմում, ինչպես նաեւ վիճակ, երբ նախատեսվում են միայն էլեկտրամագնիսական համատեղելիությունն ապահովելու ֆունկցիաները՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004/108/ԵՀ հրահանգի համաձայն¹.
- 47) «թերմոստատն անջատած ռեժիմ» նշանակում է առանց ջերմային բեռնվածքի եւ ակտիվացված ջերմային ֆունկցիայի ժամերին համապատասխանող վիճակ, ընդ որում, ջեռուցման ֆունկցիան միացված է, սակայն ջերմային պոմպով սենքի տաքացուցիչը կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչը չի գործում, ակտիվ ռեժիմում ցիկլային աշխատանքը չի համարվում թերմոստատն անջատած ռեժիմ.

¹ ՊՏ L 390, 31.12.2004թ., էջ 24:

- 48) «քարտերային տաքացուցչի ռեժիմ» նշանակում է վիճակ, երբ ջեռուցման սարքը ակտիվացված է սառնազդակների միգրացիան դեպի կոմպրեսոր կանխելու համար, որպեսզի սահմանափակվի կոմպրեսորը գործարկելիս սառնազդակների՝ յուրի մեջ կուտակումը.
- 49) «անջատված ռեժիմում էներգիայի սպառում» (P_{OFF}) նշանակում է ջերմային պոմպով սենքի տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի՝ անջատված ռեժիմում էներգիայի սպառումը՝ արտահայտված կՎտ-ով.
- 50) «թերմոստատն անջատած ռեժիմում էներգիայի սպառումը» (P_{TO}) նշանակում է ջերմային պոմպով սենքի տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի՝ թերմոստատն անջատած ռեժիմում էներգիայի սպառումը՝ արտահայտված կՎտ-ով.
- 51) «քարտերային տաքացուցչի ռեժիմում էներգիայի սպառում» (P_{CK}) նշանակում է ջերմային պոմպով սենքի տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի՝ քարտերային տաքացուցչի ռեժիմի ակտիվացված վիճակում էներգիայի սպառումը՝ արտահայտված կՎտ-ով.
- 52) «ցածր ջերմաստիճանում աշխատող ջերմային պոմպ» նշանակում է ջերմային պոմպով սենքի տաքացուցիչ, որը հատուկ նախատեսված է ցածր ջերմաստիճանի պայմաններում կիրառելու համար, եւ այն չի կարող ջերմություն հաղորդել ջրին $52\text{ }^{\circ}\text{C}$ ելքի ջերմաստիճանում՝ միջին կլիմայի համար սկզբնական նախագծային պայմաններում $-7\text{ }^{\circ}\text{C}$ ($-8\text{ }^{\circ}\text{C}$) չոր (թաց) ջերմաչափի մուտքի ջերմաստիճանի դեպքում.
- 53) «ցածր ջերմաստիճանի պայմաններում կիրառություն» նշանակում է կիրառություն, երբ ջերմային պոմպով սենքի տաքացուցիչն ապահովում է դրա հայտարարված ջերմունակությունը դրսի ջերմափոխանակիչ սարքի՝ $35\text{ }^{\circ}\text{C}$ ելքի ջերմաստիճանի պայմաններում.

54) «միջին ջերմաստիճանի պայմաններում կիրառություն» նշանակում է կիրառություն, երբ ջերմային պոմպով սենքի տաքացուցիչը կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչն ապահովում է դրա հայտարարված ջերմունակությունը դրսի ջերմափոխանակիչ սարքի՝ 55 °C ելքի ջերմաստիճանի պայմաններում.

Համակցված տաքացուցիչների դեպքում ջրային ջեռուցմանն առնչվող սահմանումները

55) «բեռնվածքի պրոֆիլ» նշանակում է ջրառքի տրված հաջորդականություն՝ VII հավելվածի 7-րդ աղյուսակով սահմանված կարգով, յուրաքանչյուր համակցված տաքացուցիչ համապատասխանում է առնվազն մեկ բեռնվածքի պրոֆիլի.

56) «ջրառ» նշանակում է օգտակար ջրի հոսքի արագության, օգտակար ջրի ջերմաստիճանի, օգտակար էներգատարության եւ առավելագույն ջերմաստիճանի համակցությունը, ինչպես նշված է III հավելվածի 7-րդ աղյուսակում.

57) «օգտակար ջրի հոսքի արագություն» (f) նշանակում է ըստ f լիտրերով արտահայտված՝ հոսքի նվազագույն արագությունը, որի դեպքում տաք ջուրն ապահովում է ելքային էներգիան, ինչպես նշված է III հավելվածի 7-րդ աղյուսակում.

58) «օգտակար ջրի ջերմաստիճան» (T_m) նշանակում է Յելսիուսի սանդղակով արտահայտված ջրի ջերմաստիճան, որի դեպքում տաք ջուրն ապահովում է ելքային էներգիան, ինչպես նշված է III հավելվածի 7-րդ աղյուսակում.

59) «օգտակար էներգատարություն» (Q_{tap}) նշանակում է III հավելվածի 7-րդ աղյուսակում նշված կարգով օգտակար ջրի ջերմաստիճանին համարժեք կամ դրանից բարձր ջերմաստիճանով, ինչպես նաեւ օգտակար ջրի հոսքի

արագությանը համարժեք կամ դրանից բարձր ջրի հոսքի արագությամբ մատակարարված տաք ջրի էներգատարություն՝ արտահայտված կՎտժ-ով.

- 60) «տաք ջրի էներգատարություն» նշանակում է ջրի որոշակի ջերմային հզորության, տաք ջրի արտահոսքի եւ սառը ջրի ներհոսքի միջեւ ջերմաստիճանի միջին տարբերության, ինչպես նաեւ մատակարարված տաք ջրի ընդհանուր ծավալի արտադրյալը.
- 61) «առավելագույն ջերմաստիճան» (T_p) նշանակում է Յելսիուսի սանդղակով արտահայտված՝ ջրի նվազագույն ջերմաստիճանը, որը պետք է ապահովվի ջրառի ընթացքում, ինչպես նշված է III հավելվածի 7-րդ աղյուսակում.
- 62) «ելքային էներգիա» (Q_{ref})՝ կՎտժ-ով արտահայտված՝ ջրառի օգտակար էներգատարության ընդհանուր քանակը կոնկրետ բեռնվածքի պրոֆիլի դեպքում, ինչպես նշված է III հավելվածի 7-րդ աղյուսակում.
- 63) «առավելագույն բեռնվածքի պրոֆիլ» նշանակում է առավելագույն էներգատարությամբ բեռնվածքի պրոֆիլ, որը համակցված տաքացուցիչը կարող է ապահովել՝ բավարարելով այդ բեռնվածքի պրոֆիլի ջերմաստիճանի եւ հոսքի արագության հետ կապված պայմանները.
- 64) «հայտարարված բեռնվածքի պրոֆիլ» նշանակում է համապատասխանության գնահատման նպատակով կիրառվող բեռնվածքի պրոֆիլ.
- 65) «էլեկտրաէներգիայի օրական սպառում» (Q_{elec}) նշանակում է հայտարարված բեռնվածքի պրոֆիլին համապատասխան 24 ժամ անընդմեջ ջրային ջեռուցման դեպքում էլեկտրաէներգիայի սպառում՝ արտահայտված կՎտժ-ով՝ վերջնական էներգիայի հաշվարկով.
- 66) «վառելիքի օրական սպառում» (Q_{fuel}) նշանակում է հայտարարված բեռնվածքի պրոֆիլին համապատասխան 24 ժամ անընդմեջ վառելիքի սպառում՝ արտահայտված կՎտժ-ով՝ ԱՋԱ-ի հաշվարկով:

ՀԱՎԵԼՎԱԾ II**Էկոնախագծմանը ներկայացվող պահանջները**

1. ՍԵՆՔԻ ՍԵՂՈՆԱՅԻՆ ՋԵՌՈՒՑՄԱՆ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ա) 2015 թվականի սեպտեմբերի 26-ից տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը եւ օգտակար արդյունավետությունը չպետք է ցածր լինեն հետեւյալ արժեքներից՝

≤ 70 կՎտ դրվածքային ջերմային հզորությամբ, վառելիքով աշխատող կաթսայով սենքի տաքացուցիչներ եւ ≤ 70 կՎտ դրվածքային ջերմային հզորությամբ, վառելիքով աշխատող կաթսայով համակցված տաքացուցիչներ՝ բացառությամբ ≤ 10 կՎտ դրվածքային ջերմային հզորությամբ B1 տեսակի կաթսաների եւ ≤ 30 կՎտ դրվածքային ջերմային հզորությամբ B1 տեսակի համակցված կաթսաների՝

Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 86 %-ից ցածր լինի:

≤ 10 կՎտ դրվածքային ջերմային հզորությամբ B1 տեսակի կաթսաներ եւ ≤ 30 կՎտ դրվածքային ջերմային հզորությամբ B1 տեսակի համակցված կաթսաներ՝

Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 75 %-ից ցածր լինի:

> 70 կՎտ եւ ≤ 400 կՎտ դրվածքային ջերմային հզորությամբ, վառելիքով աշխատող կաթսայով սենքի տաքացուցիչներ եւ ≥ 70 կՎտ եւ ≤ 400 կՎտ դրվածքային ջերմային հզորությամբ, վառելիքով աշխատող կաթսայով համակցված տաքացուցիչներ՝

100 % դրվածքային ջերմային հզորության դեպքում օգտակար արդյունավետությունը չպետք է 86 %-ից ցածր լինի, իսկ 30 % դրվածքային ջերմային հզորության դեպքում օգտակար արդյունավետությունը չպետք է 94 %-ից ցածր լինի:

Էլեկտրական կաթսայով սենքի տաքացուցիչներ եւ էլեկտրական կաթսայով համակցված տաքացուցիչներ՝

Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 30 %-ից ցածր լինի:

Համակցված արտադրության սենքի տաքացուցիչներ՝

Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 86 %-ից ցածր լինի:

Ջերմային պոմպով սենքի տաքացուցիչներ եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչներ՝ բացառությամբ ցածր ջերմաստիճանի պայմաններում աշխատող ջերմային պոմպերի՝

Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 100 %-ից ցածր լինի:

Ցածր ջերմաստիճանի պայմաններում աշխատող ջերմային պոմպեր՝

Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 115 %-ից ցածր լինի:

- բ) 2017 թվականի սեպտեմբերի 26-ից էլեկտրական կաթսայով սենքի տաքացուցիչների, էլեկտրական կաթսայով համակցված տաքացուցիչների, համակցված արտադրության սենքի տաքացուցիչների, ջերմային պոմպով սենքի տաքացուցիչների եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է ցածր լինի հետեւյալ արժեքներից՝

Էլեկտրական կաթսայով սենքի տաքացուցիչներ եւ էլեկտրական կաթսայով համակցված տաքացուցիչներ՝

Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 36 %-ից ցածր լինի:

Համակցված արտադրության սենքի տաքացուցիչներ՝

Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 100 %-ից ցածր լինի:

Ջերմային պոմպով սենքի տաքացուցիչներ եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչներ՝ բացառությամբ ցածր ջերմաստիճանի պայմաններում աշխատող ջերմային պոմպերի՝

Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 110 %-ից ցածր լինի:

Ցածր ջերմաստիճանի պայմաններում աշխատող ջերմային պոմպեր՝

Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 125 %-ից ցածր լինի:

2. ԶՐԱՅԻՆ ԶԵՌՈՒՑՄԱՆ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆԸ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ա) 2015 թվականի սեպտեմբերի 26-ից համակցված տաքացուցիչների ջրային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է ցածր լինի հետևյալ արժեքներից՝

Հայտարարված բեռնվածքի պրոֆիլները	3XS	XXS	XS	S	M	L	XL	XXL	3XL	4XL
Ջրային ջեռուցման էներգաարդյունավետությունը	22 %	23 %	26 %	26 %	30 %	30 %	30 %	32 %	32 %	32 %

բ) 2017 թվականի սեպտեմբերի 26-ից համակցված տաքացուցիչների ջրային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է ցածր լինի հետևյալ արժեքներից՝

Հայտարարված բեռնվածքի պրոֆիլները	3XS	XXS	XS	S	M	L	XL	XXL	3XL	4XL
Ջրային ջեռուցման էներգաարդյունավետությունը	32 %	32 %	32 %	32 %	36 %	37 %	38 %	60 %	64 %	64 %

3. ՁԱՅՆԱՅԻՆ ՀՋՈՐՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2015 թվականի սեպտեմբերի 26-ից ջերմային պոմպով սենքի տաքացուցիչների եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների ձայնային հզորության մակարդակը չպետք է գերազանցի հետևյալ արժեքները՝

Դրվածքային ջերմային հզորություն ≤ 6 կՎտ		Դրվածքային ջերմային հզորություն > 6 կՎտ եւ ≤ 12 կՎտ		Դրվածքային ջերմային հզորություն > 12 կՎտ եւ ≤ 30 կՎտ		Դրվածքային ջերմային հզորություն > 30 կՎտ եւ ≤ 70 կՎտ	
Ձայնային հզորության մակարդակ (L_{WA}), ներսում	Ձայնային հզորության մակարդակ (L_{WA}), դրսում	Ձայնային հզորության մակարդակ (L_{WA}), ներսում	Ձայնային հզորության մակարդակ (L_{WA}), դրսում	Ձայնային հզորության մակարդակ (L_{WA}), ներսում	Ձայնային հզորության մակարդակ (L_{WA}), դրսում	Ձայնային հզորության մակարդակ (L_{WA}), ներսում	Ձայնային հզորության մակարդակ (L_{WA}), դրսում
60 դԲ	65 դԲ	65 դԲ	70 դԲ	70 դԲ	78 դԲ	80 դԲ	88 դԲ

4. ԱՁՈՏԻ ՕՔՍԻԴԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ա) 2018 թվականի սեպտեմբերի 26-ից տաքացուցիչների՝ ազոտի երկօքսիդով արտահայտված ազոտի օքսիդի արտանետումները չպետք է գերազանցեն հետևյալ արժեքները՝

- վառելիքով աշխատող կաթսայով սենքի տաքացուցիչներ եւ վառելիքով աշխատող կաթսայով համակցված տաքացուցիչներ, որոնք աշխատում են գազային վառելիքով՝ 56 մգ/կՎտժ ծախսված վառելիք՝ ԱՋԱ-ի հաշվարկով.
- վառելիքով աշխատող կաթսայով սենքի տաքացուցիչներ եւ վառելիքով աշխատող կաթսայով համակցված տաքացուցիչներ, որոնք աշխատում են հեղուկ վառելիքով՝ 120 մգ/կՎտժ ծախսված վառելիք՝ ԱՋԱ-ի հաշվարկով.
- արտաքին այրման շարժիչով սարքավորված՝ համակցված արտադրության սենքի տաքացուցիչներ, որոնք աշխատում են գազային վառելիքով՝ 70 մգ/կՎտժ ծախսված վառելիք՝ ԱՋԱ-ի հաշվարկով.
- արտաքին այրման շարժիչով սարքավորված՝ համակցված արտադրության սենքի տաքացուցիչներ, որոնք աշխատում են հեղուկ վառելիքով՝ 120 մգ/կՎտժ ծախսված վառելիք՝ ԱՋԱ-ի հաշվարկով.
- ներքին այրման շարժիչով սարքավորված համակցված արտադրության սենքի տաքացուցիչներ, որոնք աշխատում են գազային վառելիքով՝ 240 մգ/կՎտժ ծախսված վառելիք՝ ԱՋԱ-ի հաշվարկով.
- ներքին այրման շարժիչով սարքավորված՝ համակցված արտադրության սենքի տաքացուցիչներ, որոնք աշխատում են հեղուկ վառելիքով՝ 420 մգ/կՎտժ ծախսված վառելիք՝ ԱՋԱ-ի հաշվարկով.
- արտաքին այրման շարժիչով սարքավորված՝ ջերմային պոմպով սենքի տաքացուցիչներ եւ ջերմային պոմպով համակցված

տաքացուցիչներ, որոնք աշխատում են գազային վառելիքով՝ 70 մգ/կՎտժ ծախսված վառելիք՝ ԱԶԱ-ի հաշվարկով.

- արտաքին այրման շարժիչով սարքավորված՝ ջերմային պոմպով սենքի տաքացուցիչներ եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչներ, որոնք աշխատում են հեղուկ վառելիքով՝ 120 մգ/կՎտժ ծախսված վառելիք՝ ԱԶԱ-ի հաշվարկով.
- ներքին այրման շարժիչով սարքավորված՝ ջերմային պոմպով սենքի տաքացուցիչներ եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչներ, որոնք աշխատում են գազային վառելիքով՝ 240 մգ/կՎտժ ծախսված վառելիք՝ ԱԶԱ-ի հաշվարկով.
- ներքին այրման շարժիչով սարքավորված՝ ջերմային պոմպով սենքի տաքացուցիչներ եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչներ, որոնք աշխատում են հեղուկ վառելիքով՝ 420 մգ/կՎտժ ծախսված վառելիք՝ ԱԶԱ-ի հաշվարկով:

5. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2015 թվականի սեպտեմբերի 26-ից տաքացուցիչների մասով պետք է տրամադրվի արտադրանքի հետեւյալ տեխնիկական բնութագիրը.

ա) դրանք տեղադրողների եւ վերջնական սպառողների համար հրահանգների բուկլետները, ինչպես նաեւ արտադրողների, նրանց լիազորված ներկայացուցիչների եւ ներկրողների՝ ազատ հասանելիություն ունեցող կայքերը պետք է ներառեն հետեւյալ տարրերը՝

- կաթսայով սենքի տաքացուցիչների, կաթսայով համակցված տաքացուցիչների եւ համակցված արտադրության սենքի

տաքացուցիչների համար՝ 1-ին աղյուսակում նշված տեխնիկական պարամետրերը, որոնք չափվել եւ հաշվարկվել են III հավելվածին համապատասխան.

- ջերմային պոմպով սենքի տաքացուցիչների եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների համար՝ 2-րդ աղյուսակում նշված տեխնիկական պարամետրերը, որոնք չափվել եւ հաշվարկվել են III հավելվածին համապատասխան.
- ցանկացած հատուկ նախազգուշական միջոց, որը պետք է ձեռնարկել տաքացուցիչը հավաքելիս, տեղադրելիս կամ այն սարքին վիճակում պահելիս.
- B1 տեսակի կաթսաների եւ B1 տեսակի համակցված կաթսաների համար՝ դրանց բնութագրերը եւ հետեւյալ ստանդարտ տեքստը՝ «Օդի բնական քարշուժով աշխատող այս կաթսան նախատեսված է միայն գոյություն ունեցող շենքերում բազմաթիվ բնակարանների ընդհանուր օդատարին միացվելու համար, որն այրման մնացորդները դուրս է բերում այն սենյակից, որտեղ տեղադրված է կաթսան: Այն այրման համար անհրաժեշտ օդն անմիջապես հեռացնում է սենյակից եւ իր կազմում ընդգրկում է քարշուժի դեֆլեկտոր: Յաճր արդյունավետության պատճառով պետք է խուսափել այս կաթսան ցանկացած այլ եղանակով օգտագործելուց, ինչը կհանգեցնի էներգասպառման առավել մեծ ծավալների եւ շահագործման հետ կապված ավելի մեծ ծախսերի:».
- այն ջերմագեներատորների դեպքում, որոնք նախատեսված են այդ ջերմագեներատորներով սարքավորվող տաքացուցիչների եւ տաքացուցիչների կորպուսների համար՝ դրանց բնութագրերը, հավաքմանը ներկայացվող պահանջները՝ տաքացուցիչներին ներկայացվող էկոնախագծման պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով, ինչպես

նաեւ անհրաժեշտության դեպքում՝ արտադրողի առաջարկած համակցությունների ցանկը.

— տեղեկություններ՝ շահագործման ժամկետի ավարտից հետո կազմատման, վերաշրջանառության եւ (կամ) օգտահանման վերաբերյալ.

բ) 4-րդ հոդվածի համաձայն համապատասխանության գնահատման նպատակով տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն հետեւյալ տարրերը՝

— «ա» կետում նշված տարրերը.

— ջերմային պոմպով սենքի տաքացուցիչների եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների համար՝ եթե ներսի եւ դրսի սարքերի համակցությունից բաղկացած կոնկրետ մոդելի վերաբերյալ տեղեկությունը ստացվել է նախագծման հիման վրա կատարված հաշվարկի արդյունքում, եւ (կամ) այլ համակցություններից արտարկման միջոցով՝ այդ հաշվարկների եւ (կամ) արտարկումների, ինչպես նաեւ հաշվարկների ճշգրտությունը ստուգելու համար իրականացված ցանկացած փորձաստուգման մանրամասները, ներառյալ՝ այդ համակցությունների արդյունավետության հաշվարկի մաթեմատիկական մոդելի մանրամասները եւ այդ մոդելն ստուգելու համար ձեռնարկված միջոցառումների մանրամասները.

գ) տաքացուցչի վրա պետք է չճնշվող մակնշմամբ նշվի հետեւյալ տեղեկությունը՝

— կիրառելիության դեպքում՝ «B1 տեսակի կաթսա» կամ «B1 տեսակի համակցված կաթսա».

— համակցված արտադրության սենքի տաքացուցիչների դեպքում՝ էլեկտրական հզորությունը:

Աղյուսակ 1

Կաթսայով սենքի տաքացուցիչների, կաթսայով համակցված տաքացուցիչների եւ համակցված արտադրության սենքի տաքացուցիչներին ներկայացվող տեղեկատվական պահանջները

Մոդելը (մոդելները)՝ [այն մոդելը (մոդելները) սահմանող տեղեկությունները, որին առնչվում են այդ տեղեկությունները]	
Կոնդենսացիոն կաթսա՝ [այո/ոչ]	
Ցածր ջերմաստիճանի պայմաններում աշխատող** կաթսա՝ [այո/ոչ]	
B1 տեսակի կաթսա՝ [այո/ոչ]	
Համակցված արտադրության սենքի տաքացուցիչ՝ [այո/ոչ]	Եթե այո, ապա սարքավորված է լրացուցիչ տաքացուցիչով՝ [այո/ոչ]
Համակցված տաքացուցիչ՝ [այո/ոչ]	

Կետ	Պայմանանշան	Արժեք	Միավոր	Կետ	Պայմանանշան	Արժեք	Միավոր
Դրվածքային ջերմային հզորություն	<i>Prated</i>	x	կՎտ	Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետություն	η_s	x	%
Կաթսայով սենքի տաքացուցիչների համակցված տաքացուցիչների համար՝ Օգտակար ջերմային հզորություն				Կաթսայով սենքի տաքացուցիչների համակցված տաքացուցիչների համար՝ Օգտակար արդյունավետություն			
Դրվածքային ջերմային հզորության եւ բարձր ջերմաստիճանային ռեժիմի դեպքում *	P_4	x,x	կՎտ	Դրվածքային ջերմային հզորության եւ բարձր ջերմաստիճանային ռեժիմի դեպքում *	η_4	x,x	%
Դրվածքային ջերմային հզորության 30 %-ի եւ ցածր ջերմաստիճանային ռեժիմի դեպքում **	P_l	x,x	կՎտ	Դրվածքային ջերմային հզորության 30 %-ի եւ ցածր ջերմաստիճանային ռեժիմի դեպքում **	η_l	x,x	%
Համակցված արտադրության սենքի տաքացուցիչների համար՝ Օգտակար ջերմային հզորություն				Համակցված արտադրության սենքի տաքացուցիչների համար՝ Օգտակար արդյունավետություն			
Ապակտիվացված լրացուցիչ տաքացուցչով՝ համակցված արտադրության սենքի տաքացուցչի դրվածքային ջերմային հզորության դեպքում	$P_{CHP100 + Sup0}$	x,x	կՎտ	Ապակտիվացված լրացուցիչ տաքացուցչով՝ համակցված արտադրության սենքի տաքացուցչի դրվածքային ջերմային հզորության դեպքում	$\eta_{CHP100 + Sup0}$	x,x	%
Ակտիվացված լրացուցիչ տաքացուցչով՝ համակցված արտադրության սենքի տաքացուցչի դրվածքային ջերմային հզորության դեպքում	$P_{CHP100 + Sup100}$	x,x	կՎտ	Ակտիվացված լրացուցիչ տաքացուցչով՝ համակցված արտադրության սենքի տաքացուցչի դրվածքային ջերմային հզորության դեպքում	$\eta_{CHP100 + Sup100}$	x,x	%
Համակցված արտադրության սենքի տաքացուցիչների համար՝ Էլեկտրաարդյունավետություն				Լրացուցիչ տաքացուցիչ			
Ապակտիվացված լրացուցիչ տաքացուցչով՝ համակցված արտադրության սենքի	$\eta_{el, CHP100 + Sup0}$	x,x	%	Դրվածքային ջերմային հզորություն	P_{sup}	x,x	կՎտ

տաքացուցչի դրվածքային ջերմային հզորության դեպքում							
Ակտիվացված լրացուցիչ տաքացուցչով՝ համակցված արտադրության սենքի տաքացուցչի դրվածքային հզորության դեպքում	$\eta_{el,CHP100 + Sup100}$	x,x	%	Սպառվող էներգիայի տեսակը			
Էլեկտրաէներգիայի լրացուցիչ սպառում				Այլ կետեր			
Լրիվ բեռնվածքով	$elmax$	x,xxx	կՎտ	Սպասման ռեժիմում ջերմության կորուստ	P_{stby}	x,xxx	կՎտ
Մասնակի բեռնվածքով	$elmin$	x,xxx	կՎտ	Վառքի հրաժորան էներգասպառում	P_{ign}	x,xxx	կՎտ
Սպասման ռեժիմում	P_{SB}	x,xxx	կՎտ	Ազոտի օքսիդի արտանետումներ	NGO	x	մգ/կՎտժ
Համակցված տաքացուցիչների համար՝							
Հայտարարված բեռնվածքի պրոֆիլ				Ջրային ջեռուցման էներգաարդյունավետություն	η_{wh}	x	%
Էլեկտրաէներգիայի օրական սպառում	$Q_{ելեկ}$	x,xxx	կՎտժ	Վառելիքի օրական սպառում	Q_{fuel}	x,xxx	կՎտժ
Կոնտակտային տվյալները	Արտադրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի անունը եւ հասցեն						

* Բարձր ջերմաստիճանային ռեժիմը նշանակում է տաքացուցչի ներթողման խողովակում 60 °C ելքի ջերմաստիճան եւ տաքացուցչի արտաթոր խողովակում 80 °C մուտքի ջերմաստիճան

** Կոնդենսացիոն կաթսաների համար ցածր ջերմաստիճանը նշանակում է 30 °C, ցածր ջերմաստիճանի պայմաններում աշխատող կաթսաների համար՝ 37 °C, եւ այլ տաքացուցիչների համար՝ 50 °C ելքի ջերմաստիճան (տաքացուցչի ներթողման խողովակում):

Աղյուսակ 2

Ջերմային պոմպով սենքի տաքացուցիչներին եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչներին ներկայացվող տեղեկատվական պահանջները

- Մոդելը (մոդելները)՝ [այն մոդելը (մոդելները) սահմանող տեղեկությունները, որին առնչվում են այդ տեղեկությունները]
- «Օդ-ջուր» տեսակի ջերմային պոմպ՝ [այո/ոչ]
- «Ջուր-ջուր» տեսակի ջերմային պոմպ՝ [այո/ոչ]
- «Հակասառեցնող հեղուկ-ջուր» տեսակի ջերմային պոմպ՝ [այո/ոչ]
- Ցածր ջերմաստիճանի պայմաններում աշխատող ջերմային պոմպ՝ [այո/ոչ]
- Սարքավորված է լրացուցիչ տաքացուցչով՝ [այո/ոչ]

Ջերմային պոմպով համակցված տաքացուցիչ՝ [այր/ոչ]

Պարամետրերը պետք է ներկայացվեն միջին ջերմաստիճանի պայմաններում կիրառության համար՝ բացառությամբ ցածր ջերմաստիճանի պայմաններում աշխատող ջերմային պոմպերի Ցածր ջերմաստիճանի պայմաններում աշխատող ջերմային պոմպերի դեպքում պարամետրերը պետք է ներկայացվեն ցածր ջերմաստիճանի պայմաններում կիրառության համար:

Պարամետրերը պետք է ներկայացվեն միջին կլիմայական պայմանների համար:

Կետ	Պայմանանշան	Արժեք	Միավոր	Կետ	Պայմանանշան	Արժեք	Միավոր
Դրվածքային ջերմային հզորություն*	<i>Prated</i>	x	կՎտ	Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետություն	<i>ηs</i>	x	%
Ներսի 20 °C ջերմաստիճանի եւ դրսի T_j ջերմաստիճանի պայմաններում մասնակի բեռնվածքի դեպքում հայտարարված ջերմային հզորությունը				Ներսի 20 °C ջերմաստիճանի եւ դրսի T_j ջերմաստիճանի պայմաններում մասնակի բեռնվածքի դեպքում արդյունավետության հայտարարված գործակիցը կամ առաջնային էներգիայի գործակիցը			
$T_j = -7\text{ °C}$	<i>Pdh</i>	x,x	կՎտ	$T_j = -7\text{ °C}$	<i>ԱԳժ կամ ԱԷԳժ</i>	x,xx կամ x,x	- կամ %
$T_j = +2\text{ °C}$	<i>Pdh</i>	x,x	կՎտ	$T_j = +2\text{ °C}$	<i>ԱԳժ կամ ԱԷԳժ</i>	x,xx կամ x,x	- կամ %
$T_j = +7\text{ °C}$	<i>Pdh</i>	x,x	կՎտ	$T_j = +7\text{ °C}$	<i>ԱԳժ կամ ԱԷԳժ</i>	x,xx կամ x,x	- կամ %
$T_j = +12\text{ °C}$	<i>Pdh</i>	x,x	կՎտ	$T_j = +12\text{ °C}$	<i>ԱԳժ կամ ԱԷԳժ</i>	x,xx կամ x,x	- կամ %
$T_j =$ երկարժեք ջերմաստիճան	<i>Pdh</i>	x,x	կՎտ	$T_j =$ երկարժեք ջերմաստիճան	<i>ԱԳժ կամ ԱԷԳժ</i>	x,xx կամ x,x	- կամ %
$T_j =$ շահագործման սահմանային ջերմաստիճան	<i>Pdh</i>	x,x	կՎտ	$T_j =$ շահագործման սահմանային ջերմաստիճան	<i>ԱԳժ կամ ԱԷԳժ</i>	x,xx կամ x,x	- կամ %
«Օդ-ջուր» տեսակի ջերմային պոմպերի համար՝ $T_j = -15\text{ °C}$ (եթե $TOL < -20\text{ °C}$)	<i>Pdh</i>	x,x	կՎտ	«Օդ-ջուր» ջերմային պոմպերի համար՝ $T_j = -15\text{ °C}$ (եթե $TOL < -20\text{ °C}$)	<i>ԱԳժ կամ ԱԷԳժ</i>	x,xx կամ x,x	- կամ %
Երկարժեք ջերմաստիճան	T_{div}	x	°C	«Օդ-ջուր» ջերմային պոմպերի համար՝ շահագործման սահմանային ջերմաստիճան	<i>TOL</i>	x	°C
Ցիկլային աշխատանքի ընթացքում ջերմունակություն	<i>Pcyc</i>	x,x	կՎտ	Ցիկլային աշխատանքի ընթացքում արդյունավետություն	<i>ԱԳcyc կամ ԱԷԳcyc</i>	x,xx կամ x,x	- կամ %
Նվազման գործակից **	<i>Cdh</i>	x,x	—	Ցանցային ջրով շահագործման սահմանային ջերմաստիճան	<i>WTOL</i>	x	°C
Էներգիայի սպառումը ակտիվ ռեժիմների բացի այլ ռեժիմներում				Լրացուցիչ տաքացուցիչ			
Անջատված ռեժիմ	P_{OFF}	x,xxx	կՎտ	Դրվածքային ջերմային հզորություն *	P_{sup}	x,x	կՎտ

Թերմոստատն ոեժիմ	անջատած P_{TO}	x,xxx	կՎտ				
Սպասման ոեժիմ	P_{SB}	x,xxx	կՎտ	Սպառվող էներգիայի տեսակը			
Քարտերային աշխատանքի ոեժիմ	տաքացուցչի P_{CK}	x,xxx	կՎտ				
Այլ կետեր							
Հզորության հսկողություն	ֆիքսված/փոփոխական			«Օդ-ջուր» տեսակի չերմային պոմպերի համար՝ օդի հոսքի դրվածքային արագություն, դրսում	—	x	մ ³ /ժ
Ձայնային մակարդակ, ներսում/դրսում	հզորության L_{WA}	x / x	դԲ	Ջուր/հակասառեցնող հեղուկ-օդ» տեսակի չերմային պոմպեր՝ հակասառեցնող հեղուկի կամ ջրի մատուցման դրվածքային արագությունը, դրսի չերմափոխանակիչ	—	x	մ ³ /ժ
Ազոտի արտանետումներ	օքսիդի NGO	x	մգ/կՎտժ				
Ջերմային պոմպով համակցված տաքացուցչի համար՝							
Հայտարարված բեռնվածքի պրոֆիլը		x		Ջրային ջեռուցման էներ- գաարդյունավետություն	η_{wh}	x	%
Էլեկտրաէներգիայի օրական սպառում	Q_{elect}	x,xxx	կՎտժ	Վառելիքի օրական սպառում	Q_{fuel}	x,xxx	կՎտժ
Կոնտակտային տվյալները	Արտադրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի անունը եւ հասցեն						
* Ջերմային պոմպով սենքի տաքացուցիչների եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների համար՝ դրվածքային ջերմային հզորությունը՝ Prated-ը , հավասար է ջեռուցման նախագծային բեռնվածքին Pdesignh , իսկ լրացուցիչ տաքացուցչի դրվածքային ջերմային հզորությունը՝ Psup-ը , հավասար է լրացուցիչ ջերմային հզորության sup(T_i) :							
** Եթե Cdh-ը չափման միջոցով սահմանված չէ, ապա նվազման Դեֆոլտային գործակիցը կազմում է Cdh = 0,9 :							

*ՀԱՎԵԼՎԱԾ III***Չափումները եւ հաշվարկները**

1. Սույն կանոնակարգի պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու եւ ստուգելու նպատակներով իրականացվում են չափումներ եւ հաշվարկների՝ ներդաշնակեցված ստանդարտների կիրառմամբ, որոնց հղումային համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում*, կամ այլ հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի այլ մեթոդների կիրառմամբ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդների վրա: Դրանք պետք է համապատասխանեն 2-5-րդ կետերում սահմանված պայմաններին եւ տեխնիկական պարամետրերին:
2. Չափումների եւ հաշվարկների ընդհանուր պայմանները
 - ա) 2-5-րդ կետերում նշված չափումների նպատակներով ներսի օդի ջերմաստիճանը պետք է սահմանվի $20\text{ }^{\circ}\text{C} \pm 1\text{ }^{\circ}\text{C}$:
 - բ) 3-5-րդ կետերում նշված հաշվարկների նպատակներով էլեկտրաէներգիայի սպառման ցուցանիշը պետք է բազմապատկել փոխարկման գործակցով՝ 2,5 Φ -ով:
 - գ) Ազոտի օքսիդի արտանետումները պետք է չափվեն ազոտի մոնօքսիդի եւ ազոտի երկօքսիդի գումարով եւ արտահայտվեն ազոտի երկօքսիդով:
 - դ) Լրացուցիչ տաքացուցիչով սարքավորված տաքացուցիչների դեպքում դրվածքային ջերմային հզորության, սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության, ջրային ջեռուցման էներգաարդյունավետության, ձայնային հզորության մակարդակի եւ ազոտի օքսիդի արտանետումների չափումներն ու հաշվարկները պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով լրացուցիչ տաքացուցիչը:

- ե) Դրվածքային ջերմային հզորության, սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության, ջրային ջեռուցման էներգաարդյունավետության, ձայնային հզորության մակարդակի եւ ազոտի օքսիդի արտանետումների հայտարարված արժեքները պետք է կլորացվեն մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը:
- զ) Տաքացուցչի համար նախատեսված ցանկացած ջերմագեներատոր եւ այդպիսի ջերմագեներատորով սարքավորվող ցանկացած տաքացուցիչ փորձարկվում է համապատասխանաբար տաքացուցչի համապատասխան կորպուսի եւ ջերմագեներատորի հետ միասին:
3. Կաթսայով սենքի տաքացուցիչների, կաթսայով համակցված տաքացուցիչների եւ համակցված արտադրության սենքի տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը
- Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը՝ η_s -ը, պետք է հաշվարկվի որպես ակտիվ ռեժիմում սենքի սեզոնային էներգաարդյունավետություն η_{son} ՝ ճշգրտված ներդրումներով, որոնց համար հաշվի են առնվում ջերմաստիճանի կարգավորումը, էլեկտրաէներգիայի լրացուցիչ սպառումը, սպասման ռեժիմում ջերմային կորուստը, վառքի հրաժորանի էներգասպառումը (անհրաժեշտության դեպքում), ինչպես նաեւ համակցված արտադրության սենքի տաքացուցիչների դեպքում՝ էլեկտրաարդյունավետության ավելացմամբ ճշգրտված՝ բազմապատկելով փոխարկման գործակցով՝ 2,5 $\Phi\Phi$ -ով:
4. Ջերմային պոմպով սենքի տաքացուցիչների եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը
- ա) Դրվածքային արդյունավետության գործակիցը՝ $U\Phi_{rated}$ -ը, կամ առաջնային էներգիայի դրվածքային գործակիցը՝ $U\Phi_{rated}$ -ը, ձայնային հզորության մակարդակը կամ ազոտի օքսիդի արտանետումները

սահմանելու համար շահագործման պայմաններ պետք է լինեն 3-րդ աղյուսակում նշված ստանդարտ դրվածքային պայմանները, եւ պետք է օգտագործվի հայտարարված միեւնոյն ջերմունակությունը:

բ) Ակտիվ ռեժիմում արդյունավետության գործակիցը՝ $UU_{on-ը}$, կամ ակտիվ ռեժիմում առաջնային էներգիայի գործակիցը՝ $UU_{էԳ_{on-ը}$, հաշվարկվում է ջեռուցման մասնակի բեռնվածքի՝ $Ph(T_j)-ի$, լրացուցիչ ջերմունակության՝ $sup(T_j)-ի$ (անհրաժեշտության դեպքում), ինչպես նաեւ բինին բնորոշ արդյունավետության գործակցի՝ $U_{Գ_{bin}(T_j)-ի$ կամ բինին բնորոշ առաջնային էներգիայի գործակցի՝ $U_{էԳ_{bin}(T_j)-ի$ հիման վրա, որը կշռվում է այն բին ժամերով, որոնց համար գործում են բին պայմանները՝ հետեւյալ պայմանների կիրառմամբ՝

- 4-րդ աղյուսակում նշված սկզբնական նախագծային պայմանները.
- 5-րդ աղյուսակում նշված միջին կլիմայական պայմաններում Եվրոպայի սկզբնական ջեռուցման սեզոնը.
- անհրաժեշտության դեպքում ցիկլային աշխատանքի հետեւանքով առաջացած էներգաարդյունավետության ցանկացած նվազման ազդեցությունը՝ պայմանավորված ջերմային հզորության հսկողության տեսակով:

գ) Սկզբնական տարեկան ջեռուցման պահանջարկը՝ $Q_H-ը$, պետք է լինի նախագծային ջերմային բեռնվածքը՝ $P_{designh-ը}$ ՝ բազմապատկած $2.066H_{HE}$ ՝ ակտիվ ռեժիմի տարեկան համարժեք ժամերի:

դ) Էներգիայի տարեկան սպառումը՝ $Q_{HE-ը}$, պետք է հաշվարկվի որպես՝

- սկզբնական տարեկան ջեռուցման պահանջարկի գործակցի՝ $Q_H-ի$ եւ ակտիվ ռեժիմում արդյունավետության գործակցի՝ $UU_{on-ի$ կամ ակտիվ ռեժիմում առաջնային էներգիայի գործակցի՝ $UU_{էԳ_{on-ի}$ *հանրագումար*. եւ

— ջեռուցման սեզոնի ընթացքում անջատված, թերմոստատն անջատված, սպասման եւ քարտերային տաքացուցչի աշխատանքի ռեժիմում էներգիայի սպառման հանրագումար:

ե) Արդյունավետության սեզոնային գործակիցը՝ UUF -ը, կամ առաջնային էներգիայի սեզոնային գործակիցը՝ $UUEF$ -ը, պետք է հաշվարկվի որպես սկզբնական տարեկան ջեռուցման պահանջարկի՝ Q_H -ի եւ էներգիայի տարեկան սպառման՝ Q_{HE} -ի հարաբերակցություն:

զ) Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը՝ η_s -ը, պետք է հաշվարկվի որպես սեզոնային արդյունավետության գործակիցը՝ UUF -ը՝ բաժանած փոխարկման գործակցի՝ CC -ի կամ սեզոնային առաջնային էներգիայի գործակցի՝ $UUEF$ -ի՝ ճշգրտված ներդրումներով, որոնց համար հաշվի են առնվում ջերմաստիճանի կարգավորումները, իսկ «ջուր-հակասառեցնող հեղուկ-ջուր» տեսակի ջերմային պոմպով սենքի տաքացուցիչների եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների դեպքում՝ մեկ կամ ավելի ստորգետնյա պոմպերի կողմից էլեկտրաէներգիայի սպառումը:

5. Համակցված տաքացուցիչների ջրային ջեռուցման էներգաարդյունավետությունը

Համակցված տաքացուցչի ջրային ջեռուցման էներգաարդյունավետությունը՝ η_{wh} -ը, պետք է հաշվարկվի որպես հայտարարված բեռնվածքի պրոֆիլի ելքային էներգիայի՝ Q_{ref} -ի եւ հետեւյալ պայմաններում դրա արտադրության համար անհրաժեշտ էներգիայի հարաբերակցություն.

ա) չափումները պետք է իրականացվեն՝ կիրառելով 7-րդ աղյուսակում նշված բեռնվածքի պրոֆիլները.

- բ) չափումները պետք է իրականացվեն՝ կիրառելով քսանչորսժամյա չափման ցիկլը հետեւյալ ձեւով՝
- ժամը 00:00-ից մինչեւ 06:59-ը՝ ջրառի դադարեցում.
 - ժամը 07:00-ից՝ ջրառի իրականացում՝ հայտարարված բեռնվածքի պրոֆիլին համապատասխան.
 - վերջին ջրառի ավարտից հետո մինչեւ 24:00՝ ջրառի դադարեցում.
- գ) հայտարարված բեռնվածքի պրոֆիլն առավելագույն բեռնվածքի պրոֆիլն է կամ այն բեռնվածքի պրոֆիլը, որը ցածր է առավելագույն բեռնվածքի պրոֆիլից.
- դ) ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների համար գործում են հետեւյալ լրացուցիչ պայմանները՝
- ջերմային պոմպով համակցված տաքացուցիչները պետք է փորձաստուգվեն 3-րդ աղյուսակում նշված պայմաններին համապատասխան.
 - այն ջերմային պոմպով համակցված տաքացուցիչները, որոնց դեպքում որպես ջերմության աղբյուր է օգտագործվում օդափոխությունից հեռացվող օդը, փորձաստուգվում են 6-րդ աղյուսակում նշված պայմաններին համապատասխան:

Աղյուսակ 3

Ջերմային պոմպով սենքի տաքացուցիչների եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների ստանդարտ դրվածքային պայմանները

Ջերմության աղբյուր	Դրսի ջերմափոխանակիչ	Ներսի ջերմափոխանակիչ			
	Չոր ջերմաչափով (թաց ջերմաչափով) արտահայտված մուտքի ջերմաստիճան	Ջերմային պոմպով սենքի տաքացուցիչներ եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչներ՝ բացառությամբ ցածր ջերմաստիճանի պայմաններում աշխատող ջերմային պոմպերի		Ցածր ջերմաստիճանի պայմաններում աշխատող ջերմային պոմպեր	
		Մուտքի ջերմաստիճան	Ելքի ջերմաստիճան	Մուտքի ջերմաստիճան	Ելքի ջերմաստիճան
Դրսի օդ	+ 7 °C (+ 6 °C)	+ 47 °C	+ 55 °C	+ 30 °C	+ 35 °C
Հեռացվող օդ	+ 20 °C (+ 12 °C)				
	Մուտքի/Ելքի ջերմաստիճան				
Ջուր	+ 10 °C / + 7 °C				
Հակասառեցնող հեղուկ	0 °C/- 3 °C				

Աղյուսակ 4

Ջերմային պոմպով սենքի տաքացուցիչների եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների դրվածքային նախագծային պայմանները, չոր ջերմաչափով արտահայտված օդի ջերմաստիճանները (թաց ջերմաչափով արտահայտված օդի ջերմաստիճանը նշելով փակագծերում)

Դրվածքային նվազագույն ջերմաստիճան	Երկարժեք ջերմաստիճան	Շահագործման սահմանային ջերմաստիճան
<i>T_{designh}</i>	<i>T_{biv}</i>	<i>T_{ol}</i>
- 10 (- 11) °C	առավելագույնը՝ + 2 °C	առավելագույնը՝ -7 °C

Աղյուսակ 5

**Ջերմային պոմպով սենքի տաքացուցիչների եւ ջերմային պոմպով
համակցված տաքացուցիչների համար միջին կլիմայական
պայմաններում Եվրոպայի ջեռուցման դրվածքային սեզոնը**

bin_j	T_j [°C]	H_j [ժ/տարի]
1-ից 20-ը	- 30-ից - 11-ը	0
21	- 10	1
22	- 9	25
23	- 8	23
24	- 7	24
25	- 6	27
26	- 5	68
27	- 4	91
28	- 3	89
29	- 2	165
30	- 1	173
31	0	240
32	1	280
33	2	320
34	3	357
35	4	356
36	5	303
37	6	330
38	7	326
39	8	348
40	9	335
41	10	315
42	11	215
43	12	169
44	13	151
45	14	105
46	15	74
Ժամերի ընդհանուր քանակը՝		4 910

Աղյուսակ 6

Օդափոխությունից հեռացվող օդի առավելագույն քանակը [$\text{մ}^3/\text{ժ}$]

5,5 գ/ մ^3 խոնավության պայմաններում

Հայտարարված բեռնվածքի պրոֆիլները	XXS	XS	S	M	L	XL	XXL	3XL	4XL
Օդափոխությունից հեռացվող օդի առավելագույն քանակը	109	128	128	159	190	870	1 021	2 943	8 830

Աղյուսակ 7

Համակցված տաքացուցչի՝ ջրային ջեռուցման բեռնվածքի պրոֆիլները

ժ	3XS			XXS			XS			S			
	Q_{top}	f	T_m	Q_{top}	f	T_m	Q_{top}	f	T_m	Q_{top}	f	T_m	T_p
	կՎտժ	լ/րոպե	°C	կՎտժ	լ/րոպե	°C	կՎտժ	լ/րոպե	°C	կՎտժ	լ/րոպե	°C	°C
07:00	0,015	2	25	0,105	2	25				0,105	3	25	
07:05	0,015	2	25										
07:15	0,015	2	25										
07:26	0,015	2	25										
07:30	0,015	2	25	0,105	2	25	0,525	3	35	0,105	3	25	
07:45													
08:01													
08:05													
08:15													
08:25													
08:30				0,105	2	25				0,105	3	25	
08:45													
09:00	0,105	2	25										
09:30	0,105	2	25	0,105	2	25				0,105	3	25	
10:00													
10:30													
11:00													
11:30	0,015	2	25	0,105	2	25				0,105	3	25	
11:45	0,015	2	25	0,105	2	25				0,105	3	25	
12:00	0,015	2	25	0,105	2	25							
12:30	0,015	2	25	0,105	2	25							

ժ	3XS			XXS			XS			S			
	Q_{tap}	f	T_m	Q_{tap}	f	T_m	Q_{tap}	f	T_m	Q_{tap}	f	T_m	T_p
	կՎտժ	լ/րոպե	°C	կՎտժ	լ/րոպե	°C	կՎտժ	լ/րոպե	°C	կՎտժ	լ/րոպե	°C	°C
12:45	0,015	2	25	0,105	2	25	0,525	3	35	0,315	4	10	55
14:30	0,015	2	25										
15:00	0,015	2	25										
15:30	0,015	2	25										
16:00	0,015	2	25										
16:30													
17:00													
18:00				0,105	2	25				0,105	3	25	
18:15				0,105	2	25				0,105	3	40	
18:30	0,015	2	25	0,105	2	25							
19:00	0,015	2	25	0,105	2	25							
19:30	0,015	2	25	0,105	2	25							
20:00				0,105	2	25							
20:30							1,05	3	35	0,42	4	10	55
20:45				0,105	2	25							
20:46													
21:00				0,105	2	25							
21:15	0,015	2	25	0,105	2	25							
21:30	0,015	2	25							0,525	5	45	
21:35	0,015	2	25	0,105	2	25							
21:45	0,015	2	25	0,105	2	25							
Q_{ref}	0,345			2,100			2,100			2,100			

ժ	M				L				XL			
	Q_{tap}	f	T_m	T_p	Q_{tap}	f	T_m	T_p	Q_{tap}	f	T_m	T_p
	կՎտժ	լ/րոպե	°C	°C	կՎտժ	լ/րոպե	°C	°C	կՎտժ	լ/րոպե	°C	°C
07:00	0,105	3	25		0,105	3	25		0,105	3	25	
07:05	1,4	6	40		1,4	6	40					
07:15									1,82	6	40	
07:26									0,105	3	25	
07:30	0,105	3	25		0,105	3	25					
07:45					0,105	3	25		4,42	10	10	40
08:01	0,105	3	25						0,105	3	25	
08:05					3,605	10	10	40				
08:15	0,105	3	25						0,105	3	25	

δ	M				L				XL			
	Q_{tap}	f	T_m	T_p	Q_{tap}	f	T_m	T_p	Q_{tap}	f	T_m	T_p
	կՎտժ	լ/րոպե	°C	°C	կՎտժ	լ/րոպե	°C	°C	կՎտժ	լ/րոպե	°C	°C
08:25					0,105	3	25					
08:30	0,105	3	25		0,105	3	25		0,105	3	25	
08:45	0,105	3	25		0,105	3	25		0,105	3	25	
09:00	0,105	3	25		0,105	3	25		0,105	3	25	
09:30	0,105	3	25		0,105	3	25		0,105	3	25	
10:00									0,105	3	25	
10:30	0,105	3	10	40	0,105	3	10	40	0,105	3	10	40
11:00									0,105	3	25	
11:30	0,105	3	25		0,105	3	25		0,105	3	25	
11:45	0,105	3	25		0,105	3	25		0,105	3	25	
12:00												
12:30												
12:45	0,315	4	10	55	0,315	4	10	55	0,735	4	10	55
14:30	0,105	3	25		0,105	3	25		0,105	3	25	
15:00									0,105	3	25	
15:30	0,105	3	25		0,105	3	25		0,105	3	25	
16:00									0,105	3	25	
16:30	0,105	3	25		0,105	3	25		0,105	3	25	
17:00									0,105	3	25	
18:00	0,105	3	25		0,105	3	25		0,105	3	25	
18:15	0,105	3	40		0,105	3	40		0,105	3	40	
18:30	0,105	3	40		0,105	3	40		0,105	3	40	
19:00	0,105	3	25		0,105	3	25		0,105	3	25	
19:30												
20:00												
20:30	0,735	4	10	55	0,735	4	10	55	0,735	4	10	55
20:45												
20:46									4,42	10	10	40
21:00					3,605	10	10	40				
21:15	0,105	3	25						0,105	3	25	
21:30	1,4	6	40		0,105	3	25		4,42	10	10	40
21:35												
21:45												
<i>Qref</i>	5,845				11,655				19,07			

t	M				L				XL			
	Q_{tap}	f	T_m	T_p	Q_{tap}	f	T_m	T_p	Q_{tap}	f	T_m	T_p
	կՎտժ	լ/րոպե	°C	°C	կՎտժ	լ/րոպե	°C	°C	կՎտժ	լ/րոպե	°C	°C
21:00												
21:15	0,105	3	25									
21:30	6,24	16	10	40	12,04	48	40		24,08	96	40	
21:35												
21:45												
Qref	24,53				46,76				93,52			

ՀԱՎԵԼՎԱԾ 58

Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը

2009/125/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված շուկայի վերահսկողության նպատակով ստուգումներ կատարելիս անդամ պետությունների մարմինները կիրառում են II հավելվածով սահմանված պահանջների հետ համապատասխանության ստուգման հետեյալ ընթացակարգը՝

1. Անդամ պետությունների մարմիններն անցկացնում են յուրաքանչյուր մոդելի համար մեկ միավորի փորձարկում:
2. Տաքացուցչի մոդելը համարվում է սույն կանոնակարգի II հավելվածում սահմանված կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե՝
 - ա) հայտարարված արժեքները համապատասխանում են II հավելվածում սահմանված պահանջներին.
 - բ) սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը՝ η_s -ը, միավորի դրվածքային ջերմային հզորության դեպքում հայտարարված արժեքից պակաս է ոչ ավելի, քան 8 %-ով.

- գ) ջրային ջեռուցման էներգաարդյունավետությունը՝ $\eta_{wh-ը}$, միավորի դրվածքային ջերմային հզորության դեպքում հայտարարված արժեքից պակաս է ոչ ավելի, քան 8 %-ով.
- դ) ձայնային հզորության մակարդակը՝ $L_{WA-ը}$, միավորի հայտարարված արժեքից բարձր է ոչ ավելի, քան 2 դԲ-ով, եւ
- ե) ազոտի երկօքսիդով արտահայտված՝ ազոտի օքսիդի արտանետումները միավորի հայտարարված արժեքից բարձր են ոչ ավելի, քան 20 %-ով:
3. Եթե 2(ա) կետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա մոդելը եւ մյուս բոլոր համարժեք մոդելները համարվում են սույն կանոնակարգին չհամապատասխանող: Եթե 2(բ)-(ե) կետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա անդամ պետությունների մարմինները փորձարկման համար պատահականության սկզբունքով ընտրում են նույն մոդելի երեք լրացուցիչ միավոր:
4. Տաքացուցիչը համարվում է սույն կանոնակարգի II հավելվածում սահմանված կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե՝
- ա) երեք միավորից յուրաքանչյուրի հայտարարված արժեքները համապատասխանում են II հավելվածում սահմանված պահանջներին.
- բ) սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության՝ $\eta_s-ի$ մասով երեք միավորի միջինը միավորի դրվածքային ջերմային հզորության դեպքում հայտարարված արժեքից պակաս է ոչ ավելի, քան 8 %-ով.
- գ) ջրային ջեռուցման էներգաարդյունավետության՝ $\eta_{wh}-ի$ մասով երեք միավորի միջինը միավորի դրվածքային ջերմային հզորության դեպքում հայտարարված արժեքից պակաս է ոչ ավելի, քան 8 %-ով.
- դ) ձայնային հզորության մակարդակի՝ $L_{WA}-ի$ մասով երեք միավորի միջինը միավորի հայտարարված արժեքից բարձր է ոչ ավելի, քան 2 դԲ-ով. եւ

ե) ազոտի երկօքսիդով արտահայտված՝ ազոտի օքսիդի արտանետումների մասով երեք միավորի միջինը միավորի հայտարարված արժեքից բարձր է ոչ ավելի, քան 20 %-ով:

5. Եթե 4-րդ կետում նշված արդյունքները չեն ապահովվում, ապա մոդելը եւ մյուս բոլոր համարժեք մոդելները համարվում են սույն կանոնակարգին չհամապատասխանող: Անդամ պետությունների մարմինները մոդելի անհամապատասխանության վերաբերյալ որոշումը կայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին տրամադրում են փորձարկման արդյունքները եւ այլ համապատասխան տեղեկություններ:

Անդամ պետությունների մարմիններն օգտագործում են III հավելվածում սահմանված չափման եւ հաշվարկման մեթոդները:

ՀԱՎԵԼՎԱԾ V

6-րդ հոդվածում նշված կողմնորոշիչ հենանիշերը

Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին տաքացուցիչների համար սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության, ջրային ջեռուցման էներգաարդյունավետության, ձայնային հզորության մակարդակի եւ ազոտի օքսիդների արտանետումների առումով շուկայում առկա լավագույն տեխնոլոգիան սահմանվել է հետեւյալը՝

1. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության հենանիշը միջին ջերմաստիճանի պայմաններում կիրառության դեպքում՝ 145 %.
2. Համակցված տաքացուցիչների համար ջրային ջեռուցման էներգաարդյունավետության հենանիշերը՝

Հայտարարված բեռնվածքի պրոֆիլը	3XS	XXS	XS	S	M	L	XL	XXL	3XL	4XL
Ջրային ջեռուցման էներգաարդյունավետությունը	35 %	35 %	38 %	38 %	75 %	110 %	115 %	120 %	130 %	130 %

3. Դրվածքային ջերմային հզորությամբ՝ ջերմային պոմպով սենքի տաքացուցիչների եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների՝ դրսում ձայնային հզորության մակարդակի հենանիշերը՝

ա) ≤ 6 կՎտ՝ 39 Դբ.

բ) > 6 կՎտ եւ ≤ 12 կՎտ՝ 40 Դբ.

գ) > 12 կՎտ եւ ≤ 30 կՎտ՝ 41 Դբ.

դ) > 30 կՎտ եւ ≤ 70 կՎտ՝ 67 դԲ:

4. Ազոտի երկօքսիդով արտահայտված՝ ազոտի օքսիդի արտանետումների հենանիշերը՝

- ա) կաթսայով սենքի տաքացուցիչներ եւ կաթսայով համակցված տաքացուցիչներ, որոնք աշխատում են գազային վառելիքով՝ 14 մգ/կՎտժ ծախսված վառելիք՝ ԱՋԱ-ի հաշվարկով.
- բ) կաթսայով սենքի տաքացուցիչներ եւ կաթսայով համակցված տաքացուցիչներ, որոնք աշխատում են հեղուկ վառելիքով՝ 50 մգ/կՎտժ ծախսված վառելիք՝ *ԱՋԱ-ի հաշվարկով:*

1-4-րդ կետերում նշված հենանիշերը անպայմանորեն չեն ենթադրում, որ այդ արժեքների համակցությունը հասանելի է միայն մեկ տաքացուցչի համար:
